

## ՓԱՍՏԱԲԱՆ ՖԵԹՅԻՅԷ ԶԵԹՆԻ ՆՈՐ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ ԶՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԶԱՐՑՈՎ

Յունուարի 19-ին իսթանպուլի եւ Թուրքիոյ շարք մը այլ քաղաքներուն մէջ տեղի ունեցան «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի մահուան 6-րդ տարելիցին նուիրուած սգոյ եւ բողոքի միջոցառումներ:

Հրանդ Տինքի իրաւաչափորդներու շահերը ներկայացնող փաստաբան Ֆեթիյէ Չեթին «Չաման» օրաթերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին յայտնեց, որ Թուրքիոյ ուժային կառոյցները տեղեակ եղած են «Ակօս»-ի խմբագրի հաւանական սպանութեան մասին, սակայն որեւէ քայլի չեն դիմած չանցագործութիւնը կանխելու համար:

«Տակաւին դատավարութեան ժամանակ մենք պաշտօնական նամակ ուղարկեցինք Ազգային Հետախուզական Կազմակերպութեան ղեկ, որովհետեւ կամ անոնք կը ստեն, կամ ալ իզուր կը վատնեն այն գումարները, որ աշխատավարձի տեսքով իրենց կը տրամադրեն հարկատուները», - ըսած է Չեթին:

Փաստաբանը համոզուած է, որ իրականութեան մէջ թրքական յատուկ ծառայութիւններու տրամադրութեան տակ եղած տեղեկատուութիւնը շատ աւելին է. -



Հրանդ Տինքի իրաւաչափորդներու փաստաբան Ֆեթիյէ Չեթին

Մար.ը էջ 4

## ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ.- «ԺԱՄԱՆԱԿՆ Է ԶԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐՔԻԱ ԳՈՐԾՆԹԱՅՈՒՄ ԱՆՑՆԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ»

Թուրքիոյ երկակի պահուածքը, այս կամ այն հանգրուանին նոր նախապայմաններու առաջադրումը, այս կամ այն իրավիճակը անհիմն ձեւով ըստ սեփական ցանկութեան մեկնաբանումը հանգեցուցին հոն, որ գործընթացը փաստօրէն սառեցուած է, յայտարարած է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան, «Անդին» ամսագրին տրուած հարցազրոյցի մը ընթացքին՝ ներկայացնելով հայ-թրքական յարաբերութիւններու վիճակը:

«Մենք Թուրքիայի հետ գործընթացը նախաձեռնեցինք շատ անկեղծ նպատակով՝ տարածաշրջանում հասնելու բարիդրացիութեան, անվտանգութեան եւ համագործակցութեան նոր մակարդակի: Ասել, թէ այնքան միամիտ էինք, որ կարծում էինք՝ դա հեշտ է լինելու, շատ սխալ կը լինի: Այսօր կարելի է գնահատել գործընթացի արդիւնքը. Թուրքիայի երկակի պահուածքը, այս կամ այն փուլում նոր նախապայմանների առաջադրումը, այս կամ այն իրավիճակն անհիմն ձեւով ըստ սեփական ցանկութեան մեկնաբանումը հանգեցրին նրան, որ գործընթացը փաստացիօրէն սառեցուած է: Եւ այսօր կարելի է արձանագրել հետեւեալը. նման զարգացումը մեզ համար, որքան էլ ցաւալի լինէր,

անակնկալ չէր, իսկ ողջ միջազգային հանրութիւնը առնուազն իր համար արձանագրեց Թուրքիայի իրական դէմքը, եւ համոզուած եմ, որ այն բոլոր մտահոգութիւնները, որոնք մենք ունեցել ենք եւ ունենք Թուրքիայի առնչութեամբ, ներկայում արդէն ընկալելի են նաեւ մեր միջազգային գործընկերների համար: Թուրքիայի հետ այս ողջ գործընթացը մեզ հնարաւորութիւն տուեց սիրուքի մեր հայրենակիցների եւ մեր սեփական հանրութեան հետ երկխօսութիւնը բարձրացնել մի նոր ու խոստումնալից մակարդակի: Մենք բոլորս ակամապէս եղանք քաղաքական նոր մշակոյթի դրսեւորման: Ի դէպ, եւ՝ մեր հանրութիւնը, եւ՝ ողջ աշխարհը համոզուեց նրանում, որ մեզ համար ամենաբարդ խնդիրներն անգամ, ամենայն անկեղծութեամբ, ներկայացուել են թէ՛ հանրութեանը, թէ՛ միջազգային գործընկերներին»:

Սարգսեան ըսած է թէ, շատերը թերահաւատութեամբ կը մօտենան մեր կողմէ նախաձեռնուած հայ-թրքական յարաբերութիւններու նորմալացման՝ պնդելով, թէ արձանագրութիւնները նպատակաւոր են Թուրքիային: «Պատաս-


Մար.ը էջ 5

## ՍԱՐԱՑԱԾ Է ԹՈՒՐՔ ՅԱՅՏՆԻ ՎԵՐԼՈՒԾԱԲԱՆ ՍԵՐՏԵՏ ԱԼԻ ՊԻՐԱՆՏ

Յունուար 17-ին, Թուրք յայտնի քաղաքական վերլուծաբան Մեհմետ Ալի Պիրանտ իր մահականացուն կնքած է քաղցկեղի դարմանումներու ընթացքին: Ան 72 տարեկան էր:

Պիրանտ, որ Հայկական Յեղասպանութիւնը ճանչցող Թուրք մտաւորականներէն մէկը չէր, յաճախ կոչեր կը կատարէր իշխանութեանց, որ աւելի լայնախոս մօտեցում ցուցաբերեն: Օրինակ, մօտաւորապէս տարի մը առաջ, Ֆրանսայի Մերակոյտին կողմէ Յեղասպանութեան ուրացումը քննադատականօրինակ զինքին վաւերացումն էր, հակադարձելով Թուրքիոյ մէջ Փարիզի դէմ սկսած շարժակունքներուն՝ ան կոչ ըրաւ իշխանութեանց եւ հանրութեան, որ լրջօրէն ուսումնասիրեն 1915-ի իրադարձութիւնները»:

«Ժամանակը ցոյց տուաւ, որ որեւէ երկրի կողմէ 1915-ի իրադարձութիւնները ցեղասպանութիւն համարուելէ ետք՝ թրքական կողմէն հնչող սպառնալիքները, դեպքաներու ետեւանքը, ժամանակաւոր պատժամիջոցները եւ բարձրաձայն պոռալը ոչ մէկ արժէք եւ ազդեցութիւն ունին: Յեղասպանութեան պնդումն երբ դիմակայելու համար, անհրաժեշտ է լաւ հասկնալ, թէ իրապէս, ի՞նչ տեղի ունեցած է 1915ին: Թրքական հասարակութեան մեծ մասը ծանօթ չէ այդ իրադարձութեանց: Եկէք



Թուրք քաղաքական վերլուծաբան Մեհմետ Ալի Պիրանտ

մէկ կողմ ձգենք պաշտօնապէս հնչող վարկածները եւ խորապէս ուսումնասիրենք այդ իրադարձութիւնները: Նախքան առարկելը՝ անհրաժեշտ է իմանալ ճշմարտութիւնը: Գրգռուած հասարակութեան աչքը ոչինչ կը տեսնէ: Մինչեւ այսօր, մենք միայն «ոչ» ըսած ենք, առանց գիտնալու, թէ իրապէս ի՞նչ տեղի ունեցած է այն ատեն: Մենք բաւարարուած ենք միայն պաշտօնական թեզով՝ չփորձելով ունենալ սեփական կարծիք: Իշխանութիւնները մինչեւ օրս «ոչ» են այդ կողմ չեն անցած: Միայն «ոչ» ըսելով՝ անհաւաստի, այս օրին հասած ենք», անհազանգած էր Պիրանտ:

## ԶԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԸ ՍԱՍՏԻԿ ԴԺԳՈՐ Է ԵԱՅԿ ԴԻՏՈՐԴՆԵՐՈՒ ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԵՆ

Եւրոպական Խորհուրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽՆՎ) Հայաստանի պատուիրակութեան ղեկավար Դաւիթ Յարութիւնեան քննադատեց ԵԽՆՎ-ի դիտորդներու յայտարարութիւնները հայաստանի նախընտրական իրավիճակի վերաբերեալ՝ պնդելով, թէ «ցնցուած է դրանց ձեւից եւ բովանդակութիւնից»:

Վեհաժողովի դիտորդական առաքելութիւնը Երեւանի մէջ մամուլի ասուլիս հրաւիրած էր, մտահոգութիւն յայտնելով շարք մը խնդիրներու շուրջ, նախ եւ առաջ՝ ընտրացուցակներու շարունակական եւ էական անճշտութիւններու վերաբերեալ՝ ընդգծելով, որ ճշգրիտ ցուցակները որեւէ պատշաճ ընտրութեան համար նախապայման են:

Արձագանքելով այս գնահատականին, Դաւիթ Յարութիւնեան պնդեց, թէ այդ կազմուած է նախօրոք, մինչեւ իսկ պատուիրակութեան հանդիպումը ընտրացուցակներու մշակման համար պատասխանատու հիմնական կառոյցի՝ Ոստիկանութեան հետ, եւ արտատպուած՝ 2012-ի խորհրդարանական ընտրութիւններու վերաբերեալ Պարոնուհի Նիքըլսընի պատուիրակութեան զեկոյցէն:

«Քանի որ մենք այդ զեկոյցում տեղ գտած պնդումները համարում էինք կեղծ, իսկ Հայաստանի իշխանութիւնների բերած ողջամիտ փաստարկները՝ անտեսուած, ուստի հրաւիրեցինք ԵԽՆՎ-ին խորհրդարանական ընտրութիւններից յետոյ յետընտրական առաքելութիւն իրականացնել՝ ցուցակների ճշգրտութիւնը ստուգելու համար: Յաւօք, սակայն, կազմակերպութիւնը չընդունեց մեր հրաւերը եւ փոխարէնը որոշեց շարունակել նոյն ճանապարհը՝ անհիմն ու կեղծ մեղադրանքները ընտրացուցակների վերաբերեալ», - յայտարարեց Հայաստանի պատուիրակութեան ղեկավարը:

Եւրոպական կառոյցին յղած նամակին մէջ, իշխող Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչը անգամ մը եւս կը պնդէ, թէ Հայաստանի իշխանութիւնները ըրած են առաւելագոյնը՝ ընտրացուցակներու մէջ եղած անճշտութիւնները վերացնելու համար:

Հայաստանեան պատուիրակութեան ղեկավարը անհիմն որակեց նաեւ ԵԽՆՎ-ի դիտորդական առաքելութեան միւս դիտարկումը:

Մար.ը էջ 5



# ՈՐՔԱՆՈ՞Վ ԵՆ ԻՐԱԳՈՐԾՈՒԵԼ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

## ԳԻՐԾԱԲԱԼԱՍՄԵՆՆԱՆ

Մեկնարկել է ֆետրուարի 18-ին կայանալիք նախագահական ընտրությունների քարոզարշավը: 8 թեկնածուները իրենց ծրագրերով փորձելու են սիրաշահել ընտրողներին: Իսկ Հայաստանում նախընտրական ծրագրերն արդեօ՞ք նախադրեալ են ընտրուել կամ չընտրուելու համար:

«Երկրորդ սերնդի բարեփոխումներն ուղղակիօրէն կ'անդրադառնան ամբողջ ժողովրդի բարեկեցութեան վրայ: Ամէն ոք պէտք է զգայ, որ իր ինքնադրսեւորման հնարաւորութիւններն ընդլայնուած են, եւ իր կեանքի որակը բարելաւուած է: Ստեղծուելու են նպատակաւոր պայմաններ՝ մարդկանց աշխատանքով ապահովելու համար: «Աշխատանքը պէտք է որոնի մարդուն», ինչը նշանակում է ունենալ արդիւնաւէտ աշխատուժի շուկայ, որը կը բացայայտի կառուցուածքային գործազրկութեան խնդիրը: Սա հնարաւորութիւն կը տայ իրականացնել նպատակային վերապատրաստման ծրագրեր՝ մարդկանց հմտութիւնները եւ մասնագիտացումը աշխատատեղերին համապատասխանեցնելու նպատակով», - սա ՀՀ նախագահ, նախագահի թեկնածու Սերժ Սարգսեանի 2008թ. նախընտրական ծրագրից մի հատուած էր:

Իսկ երկրում ի՞նչ փոփոխեց անցնող 4 տարիների ընթացքում (2012թ. դեռ ամփոփուած չէ): Ազգային վիճակագրական ծառայութեան հրատարակած պաշտօնական տուեալներով, չնայած 2011թ.-ին 2010թ.-ի նկատմամբ աղքատութեան մակարդակը նուազել է, սակայն թէ՛ աղքատութեան մակարդակը, թէ՛ դրա խորութիւնն ու սրութիւնը դեռեւս գերազանցում են 2008թ.-ի ցուցանիշներին: 2011թ.-ին աղքատութեան մակարդակը կազմել է 35%, ինչը մի փոքր ցածր է նախորդ տարուայ ցուցանիշից՝ 35,8%:

2011թ.-ին բնակչութեան աւելի քան ամէն երրորդը՝ 35%-ը, եղել է աղքատ, նրանցից ամէն հինգերորդը՝ 19,9%-ը եղել է շատ աղքատ, իսկ նրանց թւում 3,7%-ը՝ ծայրայեղ աղքատ: 2009-2011թթ. ընթացքում մօտ 250 հազար մարդ դարձել է աղքատ, աղքատների թուաքանակը 2011թ.-ին կազմել է մօտ 1.1 մլն (մշտական բնակչութեան ցուցանիշի հաշուով), մօտ 240 հազարը նոյն ժամանակահատուածում դարձել է շատ աղքատ, որոնց թուաքանակը կազմել է 650 հազար: Միայն երեք տարիների ընթացքում մօտ 70 հազարը դարձել է ծայրայեղ աղքատ, որոնց թուաքանակը 2011թ.-ին կազմել է մօտ 120 հազար: 2011թ.-ին 2008թ.-ի նկատմամբ առաւել արագ աւելացել է ծայրայեղ աղքատութեան մակարդակը՝ 2,3 անգամ, շատ աղքատներին՝ 1,6 անգամ, իսկ ընդհանուր աղքատութեան մակարդակը՝ 26,8 %-ով:

Փաստորէն նախագահի թեկնածուի 2008թ. նախընտրական ծրագրի սոցիալական հատուածը կարելի է ասել տապալուած է, քանի որ քաղաքացիներն աւելի են աղքատացել:

Իսկ ի՞նչ է խոստանում Սերժ Սարգսեանը 2013-2018թթ. համար «Հայաստանի տնտեսական զարգացումն առաջնորդուելու է

բարձր արտադրողականութեան եւ տեխնոլոգիական նոր որակ կրող արդիւնաբերութեան ձեւաւորման, արտաքին շուկաներում տեղական արտադրողի եւ արտահանողի համար բարենպաստ ռեժիմների երաշխաւորման, երկրի ներսում ազատ տնտեսական գոտիների կայացման, արդիւնաւէտ արտաքին ներդրումների ներգրաւման ու գործարար միջավայրի համակարգային բարելաւման քաղաքականութեամբ», - ասուած է թեկնածուի 2013թ. նախընտրական ծրագրում:

Ըստ ծրագրի՝ զարգացման քաղաքականութեան հիմնական նպատակն է լինելու միջին եւ բարձր որակաւորում պահանջող աշխատատեղերի ստեղծումն ու տնտեսութիւնում արտադրողականութեան բարձրացումը: Արդիւնաբերական քաղաքականութիւնը մտնում է ակտիւ իրագործման փուլ: Երկրի արդիւնաբերական համակարգի ձեւաւորման առանցքը կազմելու են մրցունակ տեխնոլոգիաներ կիրառող ու նորարարական արդիւնք ստեղծող ոլորտները:

«Այս նպատակին համելու համար կարեւորում ենք արտադրութեան եւ իրացման գլոբալ արժեքը թափում Հայաստանի դերի մեծացմանը նպաստող համարձակ նախագծերի իրականացումը: Հեղինակաւոր ընկերութիւնների ներգրաւում, ազատ տնտեսական գոտիների արդիւնաւէտ գործարկում, միջազգային շուկայում հայկական ծագում ունեցող ապրանքների հեղինակութեան ու ճանաչելիութեան բարձրացման միջոցառումներ. արանք են լինելու երկրի տնտեսութիւնը արտահանմանն ուղղուած զարգացմանը տանող առաջնային գործիքները», - գրուած է ծրագրում:

Թեկնածուն խոստանում է նշուած քաղաքականութեան շեշտադրումներով ապահովել տնտեսական զարգացման այնպիսի փոխակերպում, որի արդիւնքում Հայաստանի քաղաքացին ստեղծելու է բարձրարժէք եւ մրցունակ ապրանք ու ծառայութիւն, ունենալու է երաշխաւորուած աշխատանք իր երկրում ու բաւարար ճկունութիւն] աշխատաշուկայում իր գիտելիքն ու կարողութիւնն անկաշկանդ իրացնելու համար, սպառողական, իսկ պահանջարկը բաւարարելիս ընտրութեան շարժառիթ է դառնալու որակը: «Եւ, որ ամենակարեւորն է, իւրաքանչիւր հայաստանցի իրական երաշխիք է ունենալու, որ իր երեխաներն ապրելու են առաջադէմ ու ապահով Հայաստանում»:

Արդեօք Սերժ Սարգսեանին կը յաջողուի՞ ստեղծել մրցունակ տնտեսութիւն, զարկ տալ օրէջօր փակուող ու հարկային ճնշմանը չդիմացող փոքր ու միջին տնտեսութիւնների զարգացմանը, արդեօք կը յաջողուի՞ օլիգարխներին հեռու պահել տնտեսութիւնից, որը վերածել են հսկայական մենաշնորհային ոլորտի, արդեօք կառավարութեան սոցիալական ծրագրերը ուղղուած կը լինեն դէպի սովորական քաղաքացի, թէ՛ շարունակելու են նրա դէմ գործել: Միթէ՞ ծրագրային երաշխիքները բաւարար են: Հարցեր են, որոնց պատասխանները պիտի տան ընտրողները՝ Փետրուարի 18-ին իրենց քուէարկութիւնով:

«ՀԵՏՔ»

# ԱԿԱՆԱՊԱՏ ԶԵԿՈՅՑ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՄԱՐ

## ՁԷՅՄՍՅԱԿՈՒԲԱՆ

Ինչպէս տեղեկացնում է tert.am-ը, Անվտանգութեան եւ ռազմավարական հետախուզութեան եւրոպական կենտրոնը, որ 2002 թուականին հիմնուել է Բրիւսէլում, զեկոյցով անդրադարձել է հայ-իրանական յարաբերութեանը: Դրանում նշուած է, որ Իրանը Հայաստանի ամենավատահալի եւ զլիւաւոր դաշնակիցն է համարուում: Զեկոյցի վերլուծաբանների կարծիքով, հայ-իրանական առանձնապատուկ յարաբերութիւնները շահաւէտ են երկու կողմերի համար էլ. Թեհրանը Երեւանի օգնութեամբ շրջանցում է Եւրամիութեան եւ ԱՄՆ-ի պատժամիջոցները, իսկ Երեւանը Իրանի օգնութեամբ՝ Թուրքիայի եւ Ատրպէյճանի տնտեսական պատժամիջոցները:

«... Երեւանի ու Թեհրանի միջեւ Ազատ առեւտրի գոտու ստեղծումը կարող է թուլացնել Հայաստանի տնտեսութեան կախուածութիւնը տրանսֆերտներից, միջազգային ֆինանսական կազմակերպութիւններից ստացուող վարկերից ու հայկական սփիւռքի օգնութիւնից», ասուած է զեկոյցում: Հայ-իրանական յարաբերութեան մասին եւրոպական զեկոյցը բաւական հետաքրքրաշարժ է, առաջին հերթին այն պատճառով, որ դրանում կարծես թէ բաւական մեծացում է Իրանի դերը Հայաստանի համար:

Հայաստանն իսկապէս Իրանի հետ ունի տնտեսական ու քաղաքական կարեւոր յարաբերութիւն, շահերն ընդհանրութիւն, բայց արդեօք իրատեսական է համարել, որ հայ-իրանական յարաբերութիւնը կարող է Հայաստանի համար փոխարինել արտերկրի տրանսֆերտները, միջազգային վարկերն ու Սփիւռքի օգնութիւնը:

Այն, որ Հայաստանի տնտեսութիւնը պէտք է դուրս բերուի տրանսֆերտներից, միջազգային վարկերից եւ Սփիւռքի օգնութիւնից մեծ կախուածութիւնից, աներկբայ է: Սփիւռքը պէտք է գործօն լինի որպէս ներդրումային աղբիւր, որպէս նոր տեխնոլոգիաների եւ մշակոյթի աղբիւր, օրինակ հանդիսանալով նաեւ արտերկրի ներդրողների համար: Տրանսֆերտներն իհարկէ ամենեւին վատ բան չեն, բայց դրանք պէտք է լինեն Հայաստանի տնտեսութեան օժանդակ, ոչ թէ առանցքային բաղադրիչ, առաւել եւս, որ դրանք նաեւ աղետալի արտագաղթի հետեւանք են:

Եւրոպական կառույցի զեկոյցը հայ-իրանական յարաբերութիւնը ենթատեքստային խորքում կարծես թէ ներկայացնում է որպէս վտանգ Արեւմուտքի եւ Ռուսաստանի համար, այն համատեքստում, որ Իրանի միջոցով Հայաստանը կարող է ազատուել Արեւմուտքից եւ Ռուսաստանից կախուածութիւնից, ինչպէս նաեւ Սփիւռքի առաջ կաշկանդուածութիւնից եւ կշտամբանքներից: Այլ կերպ ասած, ենթատեքստում հայ-իրանական յարաբերութիւնը կարծես թէ ուռճացում է հեռահար մտահոգութեան աստիճան:

Հայ-իրանական յարաբերութիւնը խիստ սահմանափակ տնտեսական պոտենցիալ ունի այն պարզ պատճառով, որ գուրկ է տեխնոլոգիական արդիական հենքից: Միեւնոյն ժամանակ, փորձագիտական պնդումը, թէ Իրանը Հայաստանի

օգնութեամբ շրջանցում է Եւրամիութեան եւ Ամերիկայի Միացեալ Նահանգների պատժամիջոցները, ըստ ամենայնի մեղմ ասած փոքր ինչ չափազանցութիւն են: Այդ կապակցութեամբ, օրերս ԱՄՆ կոնգրեսում ունեցած ելույթի ժամանակ, Հայաստանում ԱՄՆ դեսպան Զոն Հեֆերնը յայտարարել էր, թէ հայ-իրանական յարաբերութիւնը զարգանում է, բայց Երեւանը միաժամանակ չի խախտում միջազգային պատժամիջոցները: Այլ կերպ ասած, Իրանը չի կարող Երեւանի հետ յարաբերութեամբ շրջանցել միջազգային պատժամիջոցները: Վերջին հաշուով, պաշտօնական Երեւանը հազիւ թէ ներկայիս վիճակում գնայ այդօրինակ արկածախնդրութեան:

Բայց, եւրոպական փորձագէտների փաստաթղթում ակնյայտօրէն նկատուած է Երեւան-Թեհրան կապը հենց այդպիսի «յանցաւոր» բծով համալրելու ենթատեքստը: Արդեօք այդպիսով Երեւանի վրայ փորձում է ճնշում գործադրել այսպէս ասած պաշտօնական Պրիւսէլը: Թէ՛ այստեղ ոչ թէ Պրիւսէլն է աշխատում, այլ աւելի շատ Պաքոն, փորձելով հայ-իրանական յարաբերութիւնը ուռճացնել եւ խորքում ներկայացնել որպէս վտանգ միջազգային իրադրութեանը եւ կայունութեանը: Ի վերջոյ, Եւրոպայում ատրպէյճանական լոբբինգի գործունէութեան առումով առանձնապէս մեծ գաղտնիքներ կարծես թէ չեն մնում, յատկապէս երբ հաշուի առնենք, որ օրինակ բոլորովին վերջերս այդ մասին գրել էր նաեւ գերմանական մամուլը, այդ երկրում իշխանական մեծամասնութեան եւ կանցլերի պաշտօնի յաւանորդութեան մէկին կասկածելով Պաքոնի հետ չափազանց սերտ ու ջերմ յարաբերութեան համար:

«ԼՐԱԳԻՐ»

**ՄԱՍԻՍ ՏԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՅԱԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ  
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid  
 at Pasadena CA.  
 Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**



ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՄՏԱԴԻՐ Է

ՎԵՐԱՆԱՅԵԼ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ՅԵՏ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Ընտրարշաւի առաջին օրը Ռ. Յովհաննիսեանի Բաղաբաղի մերձակայքում հետ հանդիպումի ընթացքին

«Կայանալիք նախագահական ընտրութիւնները Սերժ Սարգսեանի եւ Րաֆֆի Յովհաննիսեանի միջեւ պայքարը չեն, այլ ժողովրդի պայքարն իշխանութեան դէմ», - համակիրների հետ հանդիպման ընթացքում յայտարարել է նախագահի թեկնածու, «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Րաֆֆի Յովհաննիսեանը:

Ըստ նրա՝ ընտրութիւնների արդիւնքում երկրում յեղափոխութիւն տեղի կ'ունենայ ժողովրդի քուէարկութեան ճանապարհով: «Մենք իշխանութեան կը գանք ոչ թէ իշխելու, այլ ծառայելու համար: Արդէն մէկ տարի անց 50%-ով կը բարձրացուի կենսաթոշակը, 50%-ով կ'աւելացուի գիտութեան եւ բանակի ֆինանսավարումը, կը բացուի 180 հազար նոր աշխատատեղ»:

Րաֆֆի Յովհաննիսեանը նա-

եւ նշել է, որ իր ընտրութիւնը յետոյ Հայաստանը պաշտօնապէս կը ճանաչի Լեւոնալին Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը: «2015թ. Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ սահմանները կամ բաց կը լինեն առանց նախապայմանների, կամ էլ Ապրիլի 24-ին մենք Ծիծեռնակաբերդում Թուրքիային կը յայտնենք մեր նախապայմանների մասին: Զաւախքը կապող օղակ կը դառնայ Վրաստանի եւ Րաֆֆի Յովհաննիսեանը մտադիր է վերանայել Ռուսաստանի հետ Հայաստանի ռազմավարական յարաբերութիւնները: Ռազմավարական գործընկեր Ռուսաստանը կը մնայ նոյն ռազմավարական գործընկերը, որի հետ յարաբերութիւնները ուղղահայեաց չեն լինի, այլ հորիզոնական՝ հիմնուած փոխադարձ յարգանքի եւ իրական գործընկերութեան վրայ»:

ՌԻԶԱՐԴ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ. «ՅԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ԼԻՆԵՆ ՈՉ ԱՅՆՔԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ»

Հայաստանի նախագահի ընտրութիւնները կը լինեն ոչ այնքան մրցակցային: Այդ լրագրողների հետ զրոյցում յայտնել է տարածաշրջանային հետազօտութիւնների կենտրոնի տնօրէն Ռիչարդ Կիրակոսեանը:

Վերջինիս խօսքով, դա նախագահ Սարգսեանի մեղքը չէ: «Սերժ Սարգսեանի մեղքը չէ, որ չունի իրական եւ ուժեղ մրցակից: Ընդդիմութիւնը մնում է չմիաւորուած, մենք տեսնում ենք անհաստեղի մրցապայքար, ոչ թէ քաղաքական կուրսերի: Սա նաեւ ցոյց է տալիս քաղաքական բանավէճերի ցածր մակարդակը», - նշել է Կիրակոսեանը:

Փորձագէտի գնահատմամբ, Հայաստանի իշխանութիւնների համար ամենալուրջ մարտահրաւէրը կը լինի հասարակութեան քիչ մասնակցութիւնն ընտրութիւններին, ինչպէս նաեւ ապահովել ազատ եւ արդար ընտրութիւնները: «Ընտրութիւնները փորձութիւն կը լինեն, բայց նաեւ հնարաւորութիւն Սերժ Սարգսեանի համար: Նա կարող է քաղաքական, սեփական ժառանգութիւն ստեղծել: Եթէ նախագահի պաշտօնավարման առաջին շրջանը նուիրուած էր Մարտի մէկի հետեւանքները յղթահարելուն, երկրորդ պաշտօնավար-



Ռիչարդ Կիրակոսեան

ման ժամանակ նա հնարաւորութիւն ունի դուրս գալու Քոչարեանի ստուերից», - արձանագրել է նա:

Խօսելով նախագահի թեկնածուների մասին՝ Ռիչարդ Կիրակոսեանը նկատել է, թէ նախագահի այլ թեկնածուներին կարելի է անուանել հին դէմքերի հիասթափեցնող խումբ. «Երեք խումբ կարելի է առանձնացնել նախագահի թեկնածուների՝ Սարգսեանի, Յովհաննիսեանի եւ տարօրինակ մարդկանց խումբ»: Ի դէպ, փորձագէտը կարծում է, թէ Լեւոն Տէր-Պետրոսեանի չառաջադրումը ճիշդ քայլ էր, սակայն սխալ էր, որ ՀԱԿ-ը չաջակցեց Հրանդ Բաղդասարեանին:

ՀՀ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏ, ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԶՐԱՆԳ ԲԱԳՐԱՏԵԱՆ, ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԳԻ ՎԵՐԻՆ ԱՐՈՒՄԱՇԱՏ ԳԻՂՈՒՄ ԱԿՏԵՐՈՎ ԻՐ ՆԱԽՐՆՈՒՐԱԿԱՆ ՔԱՐՈՂԱՐՉԱՐ, ՀԱՄԱՔՈՒՄՆԵՐԻՆ յայտարարեց, որ իր ծրագրերում մեծ ուշադրութիւն էր դարձրել հենց գիւղի խնդիրներին, ապա վստահեցրեց, որ նախագահական մրցապայքարում հիմնական պայքարը կը գնայ իր եւ գործող նախագահ Սերժ Սարգսեանի միջեւ:

«Հայաստանը միայն երեւանը չէ» կարգախօսը, ըստ թեկնածուի, լաւ կ'աշխատի յատկապէս գիւղում, չնայած, բացի այդ, նա նաեւ մէկ այլ կարգախօսունի. «Ընդամէնը 100 քայլ»:

Վերին Արտաշատում, սակաւաթիւ գիւղացիների հետ հանդիպմանը Բաղդասեանը յայտարարեց, որ ինքը համոզուած է, որ ի տարբերութիւն 2008-ի, իր շնորհիւ այս անգամ յաջողուելու է իշխանափոխութիւն կատարել: «Մեր շարժումը ձնագնդի նման գնալով մեծանալու է: Մի կարծէք, թէ պապն ամէն օր փլաւ է ուտելու», - ասաց նա:

Բաղդասեանը ներկայացրեց գիւղական խնդիրների բարեփոխումների իր ծրագիրը՝ նշելով, որ թեկնածուներից միայն երկուսն են ծրագիր ներկայացնել՝ ինքը եւ



ՀՀ նախկին վարչապետ, նախագահի թեկնածու Հրանդ Բաղդասեան

Սերժ Սարգսեանը: «Իմը ոչալ ծրագիր է, ցանկութիւնների շարան չէ, թող մեծամիտ չլինեմ, բայց եթէ կարող են, թող գրեն: Ես գիտեմ՝ այս ընտրութիւններում հիմնական ինտրիգը, հիմնական պայքարը իմ ու գործող նախագահի միջ է լինելու», - վստահեցրեց նա:

Հրանդ Բաղդասեանի խօսքով՝ ինքը եկել է շարունակելու իր գիւղական կիսատ մնացած ռեֆորմը: Բաղդասեանն ասաց, որ պաշտօն չի ուզում եւ վստահեցրեց, որ պաշտօնի համար չէ, որ պայքարի է դուրս եկել:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՒՆ ԱԻԵԼԱՑԵԼ Է 25 ՀԱԶԱՐՈՎ, ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ Է՝ Ո՞ՐՈՏԵՂԻՑ

Հայաստանը չի կատարում ընտրութիւնների կազմակերպման հարցով Եւրոպայի խորհրդի Վենետիկի յանձնաժողովի առաջարկները: NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում այս մասին յայտարարել է «Ժառանգութիւն» կուսակցութեան քարտուղար Ստեփան Սաֆարեանը՝ մեկնաբանելով նախագահական ընտրութիւններին դիտորդական առաքելութեամբ Հայաստան ժամանած ԵՆԽՎ դիտորդական յանձնաժողովի յայտարարութիւնը: Յայտարարութիւնում ԵՆԽՎ ներկայացուցիչները իրենց անհանգստութիւնն են յայտնել ընտրացուցակներում առկայ անհամապատասխանութիւնների եւ արտասահմանում ապրող ՀՀ քաղաքացիների ընտրական գործընթացին մասնակցելու վերաբերեալ անհասկանալի հարցերի կապակցութեամբ: «2011թ. աշնանը Վենետիկի յանձնաժողովի կատարած առաջարկութիւնները մինչեւ այժմ չեն իրականացուել: Եթէ չլինում էք, դրանք վերաբերում էին ԱԺ-ում մեծամասնական տեղերի կրճատմանը, պետական եւ կուսակցական աշխատակազմի բաժանմանը: Այդ ժամանակից «Ժառանգութիւն» այս հարցը բարձրացրել է, մեզ միացել են նաեւ այլ քաղաքական ուժեր, սակայն իշխանութիւնը մերժեց մեր առաջարկները», - նշեց

Սաֆարեանը: Նրա կարծիքով, առաջարկների չիրականացման համար մեղքի բաժին ունեն նաեւ միջազգային կազմակերպութիւնները, քանի որ ոչ միշտ են արձագանքում իրենց առաջարկների անտեսման պարագայում:

Ինչ վերաբերում է ընտրացուցակների թերութիւնների, Սաֆարեանը նշեց, որ թափանցիկութեան պակասը զգացուել է թիւ 1 ընտրատարածքում արտահերթ ընտրութիւնների ժամանակ, որին մասնակցել է Սաֆարեանը: Ընտրութիւնների ժամանակ ընտրացուցակները հասանելի էին բոլորին, բայց հնարաւոր չէր դրանք համեմատել նախորդ ցուցակների հետ: «Այսպիսով, անհնար էր պարզել, թէ արդեօք աւելացել են այդ ընտրութիւններում մարդկանց անուններն ընտրացուցակներում: Ի՞նչ նոր ընտրողներ են աւելացել այդ ցուցակներում, եւ նրանցից ովքեր ունեն երկու գրանցում», - ասաց Սաֆարեանը:

Ըստ նրա՝ Ոստիկանութեան խօսքը, գործից մեծ տարբերութիւն ունի: «Խօսքն ու գործը տարբերուում է: Թեմային մէկ լաւելում եւս. Ոստիկանութիւնը յայտարարել է, թէ վերջին 6 ամսուայ ընթացքում ընտրողների թիւը աւելացել է 25 հազարով: Անհասկանալի է, թէ ո՞րտեղից», - եզրափակեց նա:

ԳԻՏԱԿԱՆ ԵՏ Է ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ ՆԱԽԱԳԱՅԻ ՄՐՑԱՆԱԿԸ

ՀՀ Գիտութիւնների ազգային ակադեմիայի օրգանական եւ դեղագործական քիմիայի գիտահետազօտական կենտրոնի աւագ գիտաշխատող, Գիտութեան եւ առաջատար տեխնոլոգիաների հիմնադրամի նախագահ Յարութիւն Կարապետեանը վերադարձրել է 2008 թուականին ստացած ՀՀ նախագահի մրցանակը: «Մրցանակը վերադարձուեց մի պարզ պատճառով, որ գիտութեան բնագաւառում, ինչպէս եւ ամենուր մեր կեանքում ցինիզմը հասել է զագաթնակէտին, այլասերուել են ամբողջ գիտական համակարգը, գիտական չափորոշիչները: Եւ ես, որպէս մասնագիտական արժանապատուութեան նշան եւ բողոքի նշան՝ ընդդէմ այն ամէնի, ինչ կատարում է մեր գիտութեան բնագաւառում, նպատակադրմար գտայ վերադարձնել, քանի որ այդ ամէն ինչի պատասխանատուն երկրի նախագահն է» - ասել է գիտնականը:







# ՆԱՅԱՏԱԿ ԶՐԱՆԴ ՏԻՆՔԻ 6ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄԸ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՏԱՐԲԵՐ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ



Պոլսահայ նահատակ զոհող եւ «Ակօս» թերթի խմբագիր Հրանդ Տինքի սպանութեան 6րդ տարելիցը նշուեցաւ արժանավայել շուքով թէ՛ Լոս Անճելոսի եւ թէ՛ Պոլսոյ մէջ:

Լոս Անճելոսի մէջ հրապարակային հանդիսութիւն մը կազմակերպած էր Պոլսահայ Միութիւնը, Յունուարի 13ին, 2013, իր կեդրոնին մէջ, որուն ներկայ էին գաղութի կրօնական, քաղաքական եւ ընկերային տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

Սոյն յուշահանդէսին խօսք առին Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան, Աբօ Պողիկեան, Էտուրին Մինասեան, Կարօ Ղազարեան եւ The Armenian Weekly շաբաթաթերթի խմբագիր Խաչիկ Մուրատեան: Բոլոր ելոյթ ունեցողներն ալ դրուատեցին նահատակ Հրանդ Տինքի խիզախ գրիչն ու անոր բերած նպաստող հայ կեանքի որոշ իրականութիւններու բացայայտման, յատկապէս երկարօրէն անտեսուած եւ ուրացուած ենթարկուած ոճիւրին հանդէպ:

Գործադրուեցաւ օրուան պատշաճ գեղարուեստական յայտագիր մը:

\*\*\*

Ողբացեալ Հրանդ Տինքի սպանութեան 6րդ տարելիցին առթիւ, Շաբաթ Յունուարի 19ին, 2013, տեղի ունեցաւ ծաղկեպսակի գետեղման արարողութիւն, Մոնթեպելլոյի Հայ Նահատակներու յուշարձանին առջեւ, իսկ անոր յաջորդեց հոգեհանգստեան պաշտօն:

Նոյն օրը երեկոյեան, տեղի ունեցաւ մոմավառութիւն հանգուցեալ Հրանդ Տինքի յիշատակին, Պոլսահայ Միութեան Կեդրոնին մէջ: Միեւնոյն ժամանակ կատարուեցաւ վաւերագրական տեսաբերիցի ցուցադրութիւն, կազմակերպութեամբ Պոլսահայ Միութեան մշակութային եւ երիտասարդական յանձնախումբերուն:

\*\*\*

Պոլսոյ մէջ եւս, Հրանդ Տինքի սպանութեան 6րդ տարելիցին առթիւ Յունուարի 9ին սկսեալ, զանա-

զան միջոցառումներ տեղի ունեցան, հաւաքոյթ եւ քայլարշաւ, որոնց իրենց մասնակցութիւնը բերին Սթանպուլի մէջ գործող հայ եւ թուրք տարբեր կազմակերպութիւններ եւ Հրանդ Տինքի բարեկամներ:

Արդարեւ, Հրանդ Տինքն սպանուած էր Յունուարի 19ին «Ակօս» թերթի գրասենեակի դրան առջեւ: Այս առթիւ Պոլսոյ մէջ սարքուած զանազան ձեւի ոգեկոչման միջոցառումները կը կրէին «Հոս ենք աղբարիկ» կարգախօսը:

Յունուարի 19ին քայլարշաւ մը տեղի ունեցաւ Պոլսոյ Շիշլի թաղամասէն մինչեւ «Ակօս» ի խմբագրատունը: Քայլարշաւի աւարտին «Ակօս» ի խմբագրատան առջեւ եղած հանրահաւաքին խօսք անտող անձնաւորութիւնները, բուռն կերպով դատապարտեցին մարդկային իրաւունքներու եւ ազատ խօսքի դէմ առնուած պախարակելի միջոցառումները:

Հանրահաւաքին մասնակցողները կը կրէին նաեւ հետեւեալ կարգախօսները՝ «Մինչեւ որ մենք վերջացաւ չըսենք՝ չի վերջանար», «Բոլորս Հրանդ ենք», «Ոճրագործ պետութիւնը հաշիւ պիտի տայ» եւ այլն:

Հանրահաւաքին մասնակցած էր նաեւ Պէտէ-Վրէյի երեսփոխան Սէպահաթ Թունճէլ: Ունկնդրուեցան թրքերէն եւ հայերէն երգեր: Յուզիչ էր ելոյթը Հրանդի կողակից Ռաշէլ Տինքին: Ան ըսաւ՝ «Սպանութեան 6րդ տարին է, որ դարձեալ միասին ենք»: Ան յոյս յայտնեց որ ամբողջ ճշմարտութիւնը օր մը երեւան պիտի հանուի:

«Մարմարա» թերթին համաձայն հակառակ աննպաստ օդին եւ անձրեւին, տասնեակ հազարաւոր մարդիկ հովանոցներ բացած, եկած էին ցոյց տալու իրենց միասնութիւնը Տինքի ընտանիքին: Թուրքիոյ պատմութեան մէջ անօրինակ տեսարան կրնանք նկատել այն պատկերը, որ կը պարզուէր այս տարի ալ, ինչպէս նախորդ տարիներ:

# ԳԵՐԱՇՆՈՐՅ ՄԻՔԱՅԷԼ ԵՊՍ. ՄՈՒՐԱՏԵԱՆԻ ԱՐԾԱԹԵԱՅ ՅՈՒՐԵԼԵԱՆԸ



Յնուարի 13ին, 2013, Կլէնտելի Հայ Կաթողիկէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, հանդիսաւոր կերպով նշուեցաւ ԱՄՆ-ի եւ Գանատայի Հայ Կաթողիկէ համայնքի առաջնորդ Գերշ. Միքայէլ Եպս. Մուրատեանի քահանայութեան 25րդ տարելարձը:

Այս առթիւ տեղի ունեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, գործադրուեցաւ նոյնինքն յղեցեալ Միքայէլ Եպիսկոպոսի կողմէ: Պատարագին ներկայ էին գաղութիս հայկական քոյր համայնքներու եւ քաղաքական այլ կազմակերպութեանց ներկայացուցիչները, ինչպէս նաեւ Լոս Անճելոսի մօտ Հայաստանի աւագ հիւպատոս Գրիգոր Յովհաննիսեանը:

Ողջոյնի խօսքերով հանդէս եկան Արեւմտեան թեմի Առաջնորդ Գերշ. Յովնան Արքի. ներկայացուցիչ՝ Միքայէլ Քհնյ. Կիւրեղեան եւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանէն՝ Միւռոն Մ. Վրդ. Ազնիկեան:

Յղեցեալ Սրբազանը իր հոգեշունչ քարոզին մէջ զխաւորա-

բար անդարադարձաւ յոյսի եւ սիրոյ կարեւորութեան վրայ:

Այս առթիւ եկեղեցւոյ մէջ յղեցեալին պատարագի սկիզբը նուիրուեցաւ Տիկնանց Միութեան ատենապետուհի Տիկ. Մարիթան Հարմանտայեանի ձեռամբ:

Ս. Պատարագի աւարտին եկեղեցւոյ «Գուլումճեան» սրահին մէջ առաջնորդ Սրբազանին ի պատիւ շքեղ ընդունելութիւն մը սարքուած էր: Այստեղ ողջոյնի ջերմ խօսքերով ելոյթ ունեցաւ ժողովրդապետ Գրիգոր Վրդ. Շահինեան:

Գործադրուեցաւ օրուան պաշտաճ յայտագիր մը, շնորհաւորական խօսքերով եւ սրտաբուխ բարեմաղթութիւններով ելոյթներ ունեցան Անթուան Գարամանլեան, Դոկտ. Յովհաննէս Աճմարեան եւ Սահակ Մէյրայտարեան: Իսկ գեղարուեստական բաժնին իրենց մասնակցութիւնը բերին մայր եւ դուստր Քերթնեանները, ինչպէս նաեւ եկեղեցւոյ Այտընեան երգչախումբը, ղեկավարութեամբ Կրէկ Սարոյեանի:

## ԺԱՄԱՆԱԿՆ Է ԱՆՅՆԵԼ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԻ

Շարունակուած էջ 1-էն

խանէք, ինդրում եմ, մի պարզ հարցի. եթէ արձանագրութիւններն իսկապէս նուէր էին թուրք-իային, ապա ինչո՞ւ դրանք դարձան թուրքիայում ներքաղաքական լարուածութեան առիթ, իսկ դրանց վաւերացումը՝ անիրականանալի», հարց տուած է Հայաստանի նախագահը:

«Եթէ նայենք ապագային, կարծում եմ՝ ժամանակն է Հայաստան-Թուրքիա գործընթացում մեզ աջակցած ուղղակի եւ անուղղակի միջնորդների հետ յստակեցնել «ողջամիտ ժամկետներ» կոչուածը, եւ այդ ժամկետների ընդհանրական ընկալումն ապահովելուց

յետոյ, եթէ այդ ընթացքում թուրքիայի կողմից չիրականացուեն համապատասխան քայլեր, անցնել գործողութիւններին: Մենք չունենք ցանկութիւն՝ արձանագրութիւնների ինքնանպատակ գոյութիւնը պահպանելու: Սա, կարծում եմ, պիտի յստակ լինի բոլորի համար: Առիթ ենք ունեցել բազմիցս կրկնելու եւ մէկ անգամ եւս ուզում եմ նշել՝ թուրքիայի հետ որեւէ քայլ չի կարող հարցականի տակ դնել ցեղասպանութեան եւ դրա արդիւնք հանդիսացող՝ հայրենագրկման միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղութեամբ մեր ակտիւ գործունէութիւնը», - ըսած է Սերժ Սարգսեանը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՍԱՍՏԻԿ ԴԺԳՈՐ

Շարունակուած էջ 1-էն

Հակադարձելով ԵՆԽՎ-ի պատուիրակութեան այն կարծիքին, թէ անհրաժեշտ է վերականգնել քաղաքացիներու վստահութիւնը, քանի որ ընտրութիւնները առանցքային նշանակութիւն ունին ժողովրդավարական զարգացման համար, Դաւիթ Յարութիւնեան պնդեց, թէ նոյնիսկ իրենց՝ դի-

տորդներու յայտարարութիւնները կը պարունակն «կեղծ մեղադրանքներ եւ ընտրութիւնների արդար անցկացման եւ ընդթի հետ կապուած չափազանցուած մտահոգութիւններ, ինչը ազդում է հանրութեան վստահութեան եւ հետաքրքրութեան վրայ՝ դրանով իսկ խափանելով Հայաստանում ժողովրդավարական գործընթացները»:

Հայ news.am logo and branding.

www.massisweekly.com updated every Friday

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱԿՍՏԱՐԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ



### «ԱՐԱՖԱԹ. ԱՐԱՐԱՏ»

#### ԱԻՅՏԻՍՈՒԱԶՄԻԿ

1973 թվական: Արաբ-իսրայելյան հակամարտության ամենաբուռն տարիներէն մին:

Հերթական պատերազմը արաբներու եւ իսրայելի միջեւ: Սուրիա եւ Եգիպտոս արձանագրած են մասնակի յաջողութիւն, որոշ չափով ամոքելով իրենց 1967-ի անփառունակ պարտութիւնը եւ մասամբ մըն ալ բարձրացուցած իրենց բարոյականն ու հայրենասիրական տրամադրութիւնները:

Միջին Արեւելքը կ'եռայ, առանցքային օրակարգը պաղեստինեան հարցն է. ռազմա-քաղաքական եռեւեփուն կեանքին հիմնական նիւթը Պաղեստինի ազատագրական շարժումն է՝ իր մարտական գործողութիւններով:

Արեւմուտքի եւ իսրայելի համար՝ ահաբեկչական արարքներով, արաբներու համար՝ ոգեւորիչ եւ օրինակելի սխրանքներով: Օրուան ամենաշատ հոլովուած անունը Արաֆաթն է, որ սկսած էր փայլիլ, որպէս ազատագրական պայքարի խորհրդանիշ ու մարտիկ. շրջանառութեան մէջ էր «Ֆետայի» բառը, ակնարկելով այն պաղեստինցիներուն, որոնք անձուիրական գործողութիւններով լարուած կը պահէին սիոնական պետութիւնը: Խանդավառ էր արաբական աշխարհը եւ կիրքերը իրենց բարձրակէտին՝ Պաղեստինը ազատագրուած տեսնելու յոյսով:

1973-ին, օր մը, տունը նստած, յանկարծ լսեցինք ինքնաշարժերու ճչակներ, շեփոռներ՝ կ'ազդարարէին ինչ որ ցնծութեան ու յաղթանակի աւետիս մը. հարիւրաւոր ինքնաշարժերու շարասիւնը կը պտըտէր փողոցէ փողոց, թաղէ թաղ՝ խելայեղ վանկարկումներով, ցնծագին մոլեգնումով եւ անասելի բերկրանքով: Պատը զգամբ վազեցինք եւ փորձեցինք հասկնալ այս եռանդագին աղմուկին պատճառը, եթէ ոչ խընդակից ըլլալու, ապա գոնէ իրազեկ դառնալու յաղթական եղելութեան: Ինքնաշարժերէն վանկերով կը կրկնէին ինչ որ անուն մը՝ հետեւեալ յանգաւորումով՝ «Ա...աթ», «Ա...աթ». անհասկնալի էր անունը, շփոթի մատնող: Մեր դրացին, ելլելով օրուան ռազմա-քաղաքական իրավիճակէն եւ արաբ-իսրայելյան 1973-ի պատերազմի արդիւնքէն, ենթադրեց որ ամբողջ կը վանկարկէ՝ «Արաֆաթ», «Արաֆաթ». - Երեւի արաբներուն յաղթանակը կը տօնեն այս պաղեստինցիները. ազատուած չկայ ասոնցմէ:

Քիչ ետք աւելի սրեցինք մեր լսողութիւնը. ուզեցինք ճշգրիտ

իմանալ պատահարը, հասկնալ ամբողջին գերերջանկութիւնը:

Ինչ պարզուի. հայեր են. կը պոռան «Արարատ», «Արարատ». այդ օր Երեւանի «Արարատ» ֆուտպոլի խումբը դարձեր է Խորհրդային Միութեան ախոյեան: Հայեր կը տօնախմբէին հայկական մարզական ակումբին նուաճումը, համազգային յաղթանակի մը իրագործումը:

Արաբական աշխարհի օրուան հերոսները ֆետայիներն էին, արաբական գործերը՝ իսրայելը վտանգող. իսկ մեր հերոսները՝ Ջանգանեանը, Մարգարովը, Անդրէասեանը, Իշտոյեանը, Կաւարճեանը, Պոկտարեանը, արաբները՝ իրենց տարտով, իսկ մենք Լիբանան ապրելով՝ մեր տարտով: Հակառակ արաբական միջավայրի մէջ մեր ապրելուն, ունէինք մեր առաջնահերթութիւնները՝ Հայաստանը, «Արարատ»ը, ֆուտպոլի յաղթանակը: Երեւի այդ օրերուն, ֆիզիքայէս հոս բնակելով, ապրումներով եւ զգացումներով, բարոյական ոգիով կ'ապրէինք հայրենիքի իրադարձութիւններով. հաւանաբար, այդ օրերուն աւելի հայեր էինք, քան լիբանանցիներ. աւելի լիբանանահայեր էինք, քան՝ «լիբանանցի՝ ծագումով հայեր»: Մեզի համար՝ նախ Արարատը. ապա՝ ուրիշ բան:

Բայց ի՞նչ առնչութիւն կայ Արաֆաթի եւ Արարատի միջեւ՝ բացի անուան նմանութենէն, որ մեզի մատնած էր շփոթի:

Երկուքն ալ լեբան անուններ են: Ժողովուրդներ եւ կրօններ լեռները վերածած են սրբազան խորհրդանիշի, ինչպէս՝ Աթոսը (յոններուն), Փնեսատաթիւօն (կիպրացիներուն), Սիոնը (հրեաներուն), Արարատը (հայերուն), իսկ Արաֆաթը՝ իսլամներուն, Մեքքա սուրբ քաղաքին մօտ գտնուող, ուր ձգնած է Մուհամմէտ մարգարէն:

Այս նմանութիւնը միայն մեզի շփոթած չէր:

Արդարեւ, գրասեղանիս վրայ է 2006-ին Լոնտոն հրատարակուած Kevin Burns-ի «Eastern Philosophy» փիլիսոփայական հատորը, ուր «Իսլամական Փիլիսոփայութիւն» բաժինին մէջ (էջ 85) կայ լուսանկար մը. հոն իսլամ հաւատացեալ մը, Մեքքայի մէջ, ձեռքերը կարկուռով դէպի երկինք՝ կ'աղօթէ. լուսանկարին տակ գրուած է. «The city of pilgrims' tents at the foot of Mount Ararat can be seen in the background», ուրեմն, օտարներն ալ Արաֆաթը վերածած են Արարատի...:

Միւս կողմէ, Եասէր Արաֆաթ որպէս ՖԱԹԱՀ կազմակերպութեան



ղեկավար, Պաղեստինի ազատագրութեան պայքարի առաջնորդ, կը դառնար 20-րդ դարու պատմութեան կերտիչներէն եւ իտէալ մը ազատութեան իրաւունքի, ինչպէս որ Արարատը՝ հայկական ազատութեան եւ անկախութեան պայքարին: Ահա այլ նմանութիւն մը եւս: «Կեանքի կարուսէլ»ը ի՞նչ վերապահած էր Արաֆաթին (Ապու Ամմար) եւ Արարատին:

Առաջինը՝ տանամեակներ թափառական ապրելի (Գահիրէ, Քուէյթ, Ամման, Պէյրութ, Դամասկոս, Թրիփոլի, Թունուզ, Ալճերիա) ետք, ԱՄՆ-ի եւ Արեւմուտքի կողմէ «տեղորիստ» պիտակաւորուելէ յետոյ, իսրայելի թիւ մէկ թշնամի համարուելէ ետք, 1993 Սեպտեմբեր 13-ին Ուաշինկթընի մէջ համաձայնութեան եկաւ Իսրայելի հետ՝ ԱՄՆ-ի հովանաւորութեամբ: Երէկի հայածական «տեղորիստ»ը 1996-ին վերադարձաւ Պաղեստինի ինքնավար շրջան. ընտրուեցաւ անոր նախագահը. ահաբեկչական արտաքին արարքներէն Պաղեստինի պայքարը փոխադրեց հայրենի հողին վրայ. յաչս աշխարհին ընդունուեցաւ որպէս Պաղեստինի պաշտօնական եւ ընդունուած ղեկավարը. ՄԱԿ-էն ունեցաւ խիզախ եւ յանդուգն ելոյթներ՝ ատրճանակը մէջքին: Աւելին, 1964-էն սկսած պաղեստինեան զինեալ պայքարը, տասնամեակներու կատաղի եւ արիւնալի մաքառումներէ ետք, հազարաւոր նահատակներու զոհաբերութե-

նէն յետոյ, 29 Նոյեմբեր 2012-ին ՄԱԿ-ի կողմէ Պաղեստինին տրուեցաւ դիտորդ պետութեան կարգավիճակ: Յետ-մահու Արաֆաթ հասած էր իր նպատակին. անոր հերոսական կեանքը պսակուած էր յաղթանակով:

«Կեանքի կարուսէլ»ը բարեհաճ եւ արդար գտնուած էր Արաֆաթին նկատմամբ:

Իսկ Արարատը... տակաւին կը մնայ շղթայուած. ան կը մնայ գերի՝ իր որդիներուն կարօտով:

«Պիտի համինք սրբազան լեռ կատարիդ...»

«Հո՛ն, Արարատի փէշերուն պիտի գարնէք մեր վրանները...»

«Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկայ...»

Նոյնիսկ, Արարատը դարձած է խորհրդանիշ ու կանչ հայոց ազգահաւաքման, քանի 1980ականներուն Հայաստանի ազատագրութեան գաղափարախօսութիւնը ոմանք կ'առաջարկէին կոչել Արարատիգմ (Սիոն լեռ, սիոնիզմ):

1973-ին Եասէր Արաֆաթ արաբական աշխարհին հերոսն էր, պաղեստինցիներուն կուռքը. մենք՝ 1973-ին «Արարատ» ֆուտպոլի խումբին նուաճած բաժակով արբեցած. իսկ արդեօք ե՞րբ եւ ո՞ր հայ սերունդը ազատագրուած Արարատ լեռան շուրջ պիտի պարէ խոստացւած քոչարին...: «Կեանքի կարուսէլ»ը ի՞նչ ճակատագիր վերապահած է արդեօք ազատատենչ Արարատին: Կը սպասենք:

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>• Life Insurance</li> <li>• Health Insurance</li> <li>• Group &amp; Individual</li> <li>• Long Term Care</li> <li>• Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>• Estate Planning</li> <li>• Will &amp; Living Trust</li> <li>• Full Annual Review</li> <li>• Mortgage Protection</li> <li>• College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>• Workman's Compensation</li> <li>• Employee Benefits</li> <li>• Annuity</li> <li>• IRA</li> <li>• 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.B.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
Ապահովագրութիւնը Աճիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



# ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆՈՒՄ ՀԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԲՈՒՆԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ՇՈՒՐՁ

**ՀԵՂԻՆԱԿ՝  
ԹՈՒՐԻՔԱԳԷՏ ՄՀԵՐ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ**

Օսմանեան կառավարութիւնը սկսած իր սկզբնաւորումից վարել է իր տիրապետութեան տակ գտնուող քրիստոնեայ ժողովուրդներին բնաջնջման եւ ձուլման քաղաքականութիւն: Այս քաղաքականութեան իրականացման համար նա դիմել է տարբեր միջոցներին:

Այս միջոցներից մէկն էր դեւչիւրմէն: Դեւչիւրմէն նպատակն էր հաւաքել քրիստոնեայ ժողովուրդների տղաներին եւ դաստիարակել մուսուլմանական ոգով ու դարձնել թուրքական բանակի զինուորներ, որոնք պէտք է կուռէին, պէտք է ոչնչացնէին հենց այն ազգերին, որոնցից նրանք սերել էին:

Մատենագրութեամբ առաջին տղայահաւաքի տարեթիւր համարում է 1395թ, թէեւ հաւանական է, որ նման հաւաքներ եղել են աւելի վաղ[1]:

Դեւչիւրմէն իրականացում էր ենիչերական գործառն աղայի պահանջով: Նա նամակ էր ուղարկում սուլթանին, որը իր հերթին հրատարակում էր յատուկ հրովարտակ՝ հիւնք[2]:

Տղայահաւաքի համար ընտրւում էին ամենաառողջ, ամենագեղեցիկ տղաներին: Ընտրելով սերունդներից ամենալաւերին՝ նրանք թուլացնում էին հպատակ ժողովուրդների ներուժը, որոնք կարող էին յետագայում դառնալ առաջնորդ: Սա կարելի է համարել ռազմավարութիւն, որով թուրքերը փորձում էին կանխել յետագայում քրիստոնեաների ապստամբութիւնները[3]:

Ըստ եւրոպական աղբիւրների ընտրւում էին 5-12 տարեկան երեխաները, բայց թրքական աղբիւրները տալիս են 12-20[4]:

Ընտրելով ցածր տարիքի ուժեղ ու գեղեցիկ տղաներին՝ նրանք փորձում էին ստեղծել ուժեղ եւ որակեալ մարդուժ, որը կը ծառայի օսմանեան կայսրութեանը լաւագոյն կերպով: Բացի դրանից նրանք քրիստոնեաներին թուլացնում ու զրկում էին առաջնորդող ուժից:

Քրիստոնեայ ժողովուրդների շարքում դեւչիւրմէնին է ենթարկուել նաեւ հայ ժողովուրդը, որը շատ բացասական արդիւնքներ է ունեցել մեր ժողովրդի կեանքում:

Մանկահաւաքը հայկական նահանգներում սկսել է աւելի ուշ եւ կատարուել է աւելի քիչ քան Պալքաններում: Քանի որ այստեղ մեծ թուով մահացողական ցեղեր էին ապրում եւ նրանց ձուլումը մեծ ջանքեր էր պահանջում:[5]

Սակայն յետագայ տարիներին հայ ժողովուրդը ենթարկուել է շատ աւելի դաժան կտտանքների: Սուլթան Համիդի ժամանակաշրջանում՝ 19-րդ դարի վերջում, իրականացուեց հայ ժողովրդի առաջին մեծ ջարդը, այնուհետեւ տեղի ունեցաւ երիտթուրքերի կազմակերպած 1909թ Ատանայի ջարդը: Իսկ արդէն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացուեց հայ ժողովրդի մեծ եղեռնը, որի ժամանակ մօտ 1,5 միլիոն հայ բանջնջուեց:

Հայ ժողովրդի տեղահանման եւ ոչնչացման ժամանակ շատ հայ երեխաներ մնացին որք ու անտէր: Երիտթուրքական կառավարութիւնը որոշեց, որ այս երեխաները պէտք է բաժանուեն մահմեդական ընտանիքներին կամ ստեղծել յատուկ մանկատներ եւ տեղաւորել այս երեխաներին:

Սակայն այս ամէնը մարդասիրական գործունէութիւն չէր, այլ՝ հայ ժողովրդի հիմնովին ոչնչացման քաղաքականութիւն:

Չբաւարարուելով հայ ժողովրդի սպանողով՝ թուրքական կառավարութիւնը դիմեց աւելի ստոր քայլերի: Նա սկսեց առեւանգել որք եւ անգամ ոչ որք մանուկներին եւ բաժանել մահմեդական ընտանիքներին, ինչպէս նաեւ տեղաւորել իր ստեղծած որբանոցներում: Սրանով վերջնականապէս ցանկանում էր ոչնչացնել ու ձուլել հայ ժողովրդին:

Կան փաստեր, որոնք թոյլ են տալիս խօսել որք հայ երեխաներից կազմուած օսմանեան կառավարութեան վերջին եւ թուրքիայի հանրապետութեան առաջին ենիչերներին մասին: Յայտնի է, որ թուրք տիրահաւակ գորավար Քազիմ Կարաբէրը, արեւելեան ճակատում, հաւաքելով որք, անտուն հայ երեխաներին, նրանց տալիս էր ռազմական բազմակողմանի կրթութիւն, ինչպէս նաեւ դաստիարակում թրքական մոլի ոգով: Այս երեխաներից յետագայում կազմաւորուում է այսպէս կոչված «գիւրգուլներ օրդուսու» (ամրակազմների բանակ) գորամիւտորումը[6]:

Թուրքական աղբիւրներում Քազիմ Կարաբէրի քայլերը ներկայացուում են, թէ նա փրկել ու ուսուցում տուել է հայ որբերին[7]: Սակայն սա փրկման կամ մարդասիրական մղում չի ունեցել: Նա այս միջոցով փորձել է թրքացնել ու իսլամացնել հայ մանուկներին:

Օսմանեան կառավարութիւնը ծնողներին կորցրած եւ անտէր մնացած հայ մանուկներին հաւաքում էր եւ բաժանում էր մահմեդական ընտանիքներին: Այս մասին օսմանեան աղբիւրներում պահպանուել են յատուկ հրովարտակ՝ թուրքութեամբ 10 Յուլիսի 1915թ.: Սրանում նշուում է, որ այս երեխաները յանձնուում են մահմեդական ընտանիքներին այն պայմանով, որ նրանց տրուի մահմեդական կրթութիւն, ինչպէս նաեւ նրանց պէտք է ցրէին այնպիսի տեղեր, որտեղ հայեր չկային[8]:

Սակայն այս գործընթացում բաւականին մեծ դեր է խաղացել եւ ջանքեր գործադրել նաեւ թուրք հասարակութեան լայն շրջանները: Հայոց ցեղասպանութեան տարիներին թուրքերը եւ քրդերը առեւանգել եւ խլել են հայ մանուկներին եւ իսլամացրել: Թրքական կառավարութիւնը, չկարողանալով ժխտել այս փաստը, այն ներկայացրել է իբր «բարեգութ» թուրքերը փրկել են հայ երեխաներին[9]:

Բայց եղել են դէպքեր, երբ հայ գաղթականները մտածելով, որ իրենք դեռ չեա են դառնալու, իրենց երեխաներին յանձնել են իրենց մուսուլման դրկիցներին:[10]

Հայ երեխաների բռնի իսլամացման եւ թրքացման գործում մեծ դեր են խաղացել կառավարութեան կողմից ստեղծուած որբանոցները:

Ինչպէս թուրքերն են ասում, գաղթի ժամանակ որբերի թիւը գնալով մեծանում էր: Ըստ այդ ժամանակուայ գաղթականութեան հարցերով վարչութեան կողմից տրուած տեղեկութեան համաձայն, որոշուեց սարբերում, գիւղերի փլատակներում, ճանապարհներին եւ այլուր որք ու անտէր մնացած մանուկներին հաւաքել իբր փրկման նպատակով[11]: Եւ քանի որ նրանց թիւը գնալով շատանում էր որոշուեց մարզերում ստեղծել որբանոց-

ներ եւ այնտեղ տեղաւորել հայ որբերին:

Այս որբանոցներից յիշատակման արժանի է «Այլին թուրա» որբանոցը, որը գտնուում էր Լիբանանում եւ եղել էր նախկինում եկեղեցի: Այս որբանոցը ստեղծուում է տիրահաւակ ձեմալ փաշայի ջանքերով: Այս որբանոցում կային հայ, քուրդ եւ թուրք երեխաներ, որտեղ կազմակերպուել էր նրանց պահուումը եւ ուսուցումը:

Որոշ աղբիւրների համաձայն այստեղ կար 1200 երեխայ, որոնցից 1000ը եղել են հայ, իսկ մնացածը թուրք եւ քուրդ[12]: Իսկ Հալիդէ Էդիփը, որը եղել է իր ընկերների հետ այս դպրոցի ուսուցիչ, իր յուշերում նշում է 800 թիւը[13]:

Հալիդէ Էդիփը եւ ձեմալ փաշան ամողջովին մերժել են այն, որ այդ որբանոցում հայ երեխաներին փորձել են թրքացնել եւ իսլամացնել:

Հալիդէ Էդիփը ասել է, որ, մեծ ջանքերով հաւաքելով ցիրուցան եղած հայ եւ քուրդ որբերին, նրանց փրկել են ու ազատել շատ դժուարութիւններ, ինչպէս նաեւ ժխտել է ամերիկացի միսիոներների այն տեղեկութիւնները, որ հայ երեխաներին թրքացնելու նպատակ է եղել[14]:

Սակայն այս որբանոցի միակ նպատակն է եղել թրքացնել եւ իսլամացնել հայ երեխաներին: Այստեղ հայ երեխաներին տրուել է թրքական անուններ եւ իսլամի դասեր: Սրա մասին են վկայում մի քանի մանուկներին տրուած անունները՝ Յարութիւն Նաճարեան - Համիդ Նազիմ, Պօղոս Մերդանեան - Բեկիմ Մուհամադ, Սարգիս Սարաֆեան - Սաֆվադ Սուլէյման: Ինչպէս նաեւ կան փաստեր որոնք վկայում են իսլամի դասերի մասին. հայ մանուկներին ստիպում էին օրը հինգ անգամ նամազ կատարել եւ


ամէն երեկոյ երգել «Երկար կեանք Ձեմալ փաշային» երգը[15]:

Այս որբանոցում եղել են ահաւոր պայմաններ, որի հետեւանքով մօտ 300 հայ երեխայ է մահացել, որոնց վառուել են մանկատան յետեւի բակում[16]:

- \*\*\*\*\*
- [1] Արտակ Շաքարեան «Արեան հարկը օսմանեան կայսրութիւնում Դեւչիւրմէն» էջ 37
  - [2] Տես նոյն տեղում էջ 46
  - [3] Տես նոյն տեղում էջ 61
  - [4] Տես նոյն տեղում էջ 52
  - [5] Արտակ Շաքարեան «Արեան հարկը օսմանեան կայսրութիւնում Դեւչիւրմէն» էջ 123 Երեւան 2006
  - [6] Ռուբէն Մելքոնեան «Հայ երեխաների բռնի իսլամացումը ցեղասպանութեան տարիներին (ըստ թուրքական աղբիւրների) էջ 113 Մերձաւոր Արեւելք V Երեւան 2008
  - [7] Erhan Basyurt-Ermeni evlatliklar (sakli kalmis hayatlar)- s 58
  - [8] Ռուբէն Մելքոնեան «Հայ երեխաների բռնի իսլամացումը հայոց ցեղասպանութեան տարիներին (ըստ թրքական աղբիւրների) էջ 113 Մերձաւոր Արեւելք-Երեւան 2008
  - [9] Տես նոյն տեղում էջ 115
  - [10] Erhan Ba\_yurt-Ermeni evlatliklar (sakli kalmis hayatlar) - s 35
  - [11] Ibrahim Ethem Atnur-Turkiyede Ermeni kadinlar ve Zocuklar meselesi Ankara 2005
  - [12] [http://w.w.w.aqzgdaily.com/EnglishSupplement/FEA\\_02012006\\_0001.htm](http://w.w.w.aqzgdaily.com/EnglishSupplement/FEA_02012006_0001.htm)
  - [13] Erhan Basyurt-Ermeni evlatliklar (sakli kalmis hayatlar)-s 61
  - [14] Տես նոյն տեղում էջ 63
  - [15] [http://w.w.w.azgdaily.com/EnglishSupplement/FEA\\_02012006\\_0001.htm](http://w.w.w.azgdaily.com/EnglishSupplement/FEA_02012006_0001.htm)
  - [16] Տես նոյն տեղում

# ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՐԵՒՅՅ

Կազմակերպութեամբ՝  
**ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ  
ՄԱՍՆԱԺԻԴԻ**



Մասնակցութեամբ՝  
**ՍՏԵՓԱՆ ՅՈՎԱԿԻՄԵԱՆԻ**

---

**Շաբաթ, 26 Յունուար 2013**  
երեկոյեան ժամը 8:00-ԷԳ սկսեալ  
1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104

---

Տոմսերու համար դիմել՝ (818) 913-9311  
**ԾԱՇ ԵՒ ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$25.00**



### ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 35ՐԴ ՏԱՐԵՂԱՐԶԸ ԵՒ ՎԱՐԻՉ ԲՐՇ. ՍՏԵՓԱՆ ՍՐԿ. ԿԵՕԶԻԽՄԵԱՆԻ ՅՈՒՆԻՄԱՐԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻԾԵՐԸ

Լոս Անճելոսի իսախառուրեան Դպրաց Դաս երգչախումբի հիմնադրութեան 35րդ եւ նուիրեալ դպրապետ ու վարիչ Բրշ. Ստեփան սրկ. Կէօզիւմեանի Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծառայութեան 5րդ կրկնակ տարեդարձները տեղի պիտի ունենան Կիրակի, 27 Յունուար, 2013ին Ամերիկայի Արեւմտեան Թեմի Սրբոց Դեոնդեանց Մայր Տաճարին մէջ, առաւօտեան ժամը 10.30ին:

Պիտի պատարագէ ու քարոզէ բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Ս. Արք. Տէրաթեմեան: Երգեցողութիւնները պիտի կատարուին իսախառուրեան դպրաց դաս երգչախումբի կողմէ ղեկավարութեամբ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի, իսկ երգեհոնահարութեամբ՝ Գեղամ Աշճեանի:

Յաւարտ Ս. Պատարագի պիտի սարքուի սիրոյ սեղան եւ տեղի պիտի ունենայ գեղարուեստական յայտագիր եկեղեցւոյ Գալայճեան հանդիսարահին մէջ:

### ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ Դ.Դ. ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻ ՀԱԿԻՐԸ ՊԱՏՄԱԿԱՆԸ



1977-1978 տարիներու ընթացքին մեծ թիւով պոլսահայեր հաստատուեցան Լոս Անճելոս, որոնք գիտէին թէ հայ դպրոցն ու եկեղեցին մեծ դեր կը խաղան ազգայնականման կանգնելու կապակցութեամբ եւ այս պատճառաւ Պոլսոյ եկեղեցիներու երգչախումբերէ գաղթած բաւականաչափ թիւով դպիրներ իրենց կիրակնօրեայ դպրութեան պարտականութիւնը կը կատարէին Լոս Անճելոսի գանազան եկեղեցիներուն մէջ:

Ուրեմն պէտք էր կազմակերպուիլ ու հիմնել երգչախումբ մը, որ պիտի ծառայէր Հայց. Առաքելական Եկեղեցւոյ պայծառութեան:

Ահաւասիկ այս պայմաններուն մէջ երգչախումբ մը հիմնելու գաղափարը չղացան երեք գաղափարակիր ընկերներ՝ Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեան, Սարգիս Սէթեան եւ Եղուարդ Նիգամեան: Իսկ Բրշ. Կարպիս Սրկ. Շահնազօղլու անջատաբար այս ուղղութեամբ կայ հաստատած էր Առաջնորդ Վաչէ Սրբազան Հօր հետ:

12 Յունուար, 1978ին, Հինգշաբթի օր, վերոյիշեալ անձնաւորութիւնները, խումբ մը ալ պոլսահայ դպիրներու հետ միատեղ, Առաջնորդ Սրբազանի բարեհաճ արտօնութեամբ ժողով մը գումարեցին Առաջնորդարանի «Ուզունեան» սրահին մէջ, նպատակ ունենալով պաշտօնապէս հիմնել երգչախումբ մը:

Արեւմտեան Թեմի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Ս. Արք. Յովսէփեան գոհունակութեամբ ընդունեց ներկաներուն փափաքը եւ Պոլսոյ երգչախումբերու մասին գնահատական խօսքերով արտայայտուելէ յետոյ, յաջողութեան մաղթանքներով արտօնեց արական երգչախումբի մը կազմութիւնը:

Ներկայացուած բազմաթիւ

անուններուն մէջէն որոշուեցաւ «Իսախառուրեան Դպրաց Դաս Երգչախումբ» անունը, ի յարգանս Արեւմտեան Թեմի առաջին Առաջնորդ, Թրքահայոց Պատրիարք եւ Պոլսոյ Սուրբ Խաչ Դպրեմանքի հիմնադիր ու վանահայր Երջանակայիշատակ՝ Տ. Գարեգին Ս. Արք. Խաչատուրեանի:

Ստեփան Սարկաւազ սիրաշօթար դարձաւ երգչախումբին վարիչը, իսկ պատմական այդ ժողովին ներկաները համարուեցան երգչախումբին հիմնադիր անդամները:

Խաչատուրեան Դպրաց Դաս երգչախումբը, երկու տարիներ Առաջնորդարանի Սուրբ Յովհաննու Կարապետ Մայր Տաճարի ծառայելէ յետոյ, 1980 թուականին, Առաջնորդ Վաչէ Սրբազան Հօր արտօնութեամբ կը փոխադրուի East Los Angeles-ի Ս. Սարգիս Հայց. Առաք. Եկեղեցին, ուր 14 տարիներ կը վայելէ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վարդան Աւզ. Քհնյ. Տիւրկիւրեանի, իսկ իր վախճանումէն վերջ, 13 տարիներ Արժ. Տ. Նարեկ Աւզ. Քհնյ. Մատարեանի եւ օրուան Ծխական Խորհուրդներու հոգածութիւնը:

1998 Օգոստոս ամսուան մէջ Խաչատուրեան Դ.Դ. Երգչախումբի հիմնադրութեան 20 ամեակի առիթով կը կազմակերպուի ուխտագնացութիւն մը դէպի Հայաստան: Երգչախումբի անդամ, ներառեալ իրենց տիկինները, եւ համակիրներէ բաղկացած 149 հոգինոց ուխտաւորաց խումբը նախ կ'այցելէ պատմական վանքեր եւ տեսարժան վայրեր: 23 Օգոստոս 1998, Կիրակի օր, 32 արական կազմով երգչախումբը կ'երգէ Կոմիտասեան բազմաձայն Ս. Պատարագը Սուրբ Էջմիածնեայ Մայր Տաճարին մէջ, ղեկավարութեամբ Ստեփան Սրկ.

Շար.ը էջ 18

### ՍՏԵՓԱՆ ՍՐԿ. ԿԵՕԶԻԽՄԵԱՆԻ ՀԱԿԻՐԸ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐԸ

Ստեփան Սրկ. Կէօզիւմեան ծնած է 1950 թուականին Պոլսոյ հայաշատ թաղերէն՝ Գումգաբուի մէջ: Ան նախնական ուսումը կը ստանայ Ինճիտիպի հայ Բողոքականաց վարժարանին մէջ: 1960ին յայտնի երաժշտապետ՝ Յարութիւն Չիլիւկիւրեանի առաջնորդութեամբ մուտք կը գործէ Գումգաբու Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ Մանկանց Դպրաց Դաս, ուր իբրեւ ուսուցիչ կ'ունենայ երաժշտապետ եւ դպրապետ Սերովբէ Սիրունեանը: Ստեփան 5 տարուան ընթացքին հմուտ կը դառնայ Համբարձում Լիմոնճեանի հայկական նոթագրութեանց:

1962ին աւարտելով նախակրթարանը, կ'արձանագրուի Կեդրոնական Ազգային Վարժարան: Հակառակ դպրոցական շրջանի ծանր դասերուն, շաբաթը երկու օրեր, Դպրապետ Սիրունեան յատուկ դասերով Ստեփանին կը դասաւանդէ շարականի երգեցողութիւններ, ծիսակատարութիւն եւ հայկական նոթագրութիւն:

Սերովբէ Սիրունեանի անսպասելի մահէն յետոյ Ստեփան կը հետեւի Պաքըրգիւղի ծնունդ Ս. Աստուածախն եկեղեցւոյ երաժշտապետ եւ դպրապետ Յովսէփ Պըտրիկեանի փորձերուն:

1967ին, Գումգաբուի Ս. Յարութիւն եկեղեցւոյ թաղային խորհուրդի առաջարկով Ստեփան կը ստանձնէ նոյն եկեղեցւոյ դպրապետի մնացուց պաշտօնը:

1968ին Ստեփան Կեդրոնական Ազգային Վարժարանէն իր վկայականը ստանալէ յետոյ, կը յաջողի համալսարանական մուտքի քննութեանց եւ կ'ընդունուի Տարրաբանական ճարտարագիտական ճիւղէն ներս:

Ստեփան եւրոպական նոթագրութեան, շարականի եւ բազմաձայն երգեցողութեանց գիտելիքները աւելի յաջող ձեւով կատարելագործելու մտօք յատուկ սօլֆէժի դասեր կը ստանայ վաստակաւոր երաժշտապետ փրոֆ. Ժիրայր Ասլանեանցէ: Իսկ 22 Օգոստոս 1968ին, ձեռամբ Գերշ. Շահան Սրբ. Սըվաճեանի, կ'ունենայ ուրար կրելու արտօնութիւնը:

1970 Փետրուար ամսուան ընթացքին, Ստեփան մարզելով 6 տարեկանէն մինչեւ 15 տարեկան 50 պատանիներէ բաղկացած մանկանց երգչախումբը, կ'իրականացնէ յաջող երկու համերգներ, որուն յայտագիրը ամբողջովին կը բաղկանար հանրածանօթ երգահան՝ Տիկ. Սիրովարդ Գարեանուկեանի յօրինած երգերէն:

Ստեփան փոխ վարիչ կը նշանակուի յայտնի երաժշտապետ Բրշ. Խաչիկ Սրկ. Ելլմագեանի կողմէ ենիգիւղ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ հիմնուած Խաչատուրեան երկսեռ երգչախումբին, իսկ Ելլմագեանի արտասահման գաղթութեան յետոյ, կը ստանձնէ ղեկավարութեան պաշտօնը: 1972ին, Վարիչ Նուպար Ագնաւորեանի մահէն յետոյ կը ստանձնէ Գումգաբուի Ս. Յարութիւն եկեղեցւոյ վառվառեան երգչախումբի, իսկ 1972 Սեպտեմբեր ամսուան մէջ ալ, Գէորդ Պօյաճեանի հրաժարումէն վերջ, կը ստանձնէ նաեւ Պաքըրգիւղի Ծնունդ Սուրբ Աստուածածին եկեղեցւոյ Քառասուն Մանկանց երկսեռ երգչախումբի ղեկավարի պաշտօնները:

Ստեփան, Աւետիք Իսահակեանի ծննդեան 100 ամեակին առթիւ եւ կարգ մը բարեգործական միու-



թիւններու առաջարկին ընդառաջելով, կը սարքէ յաջող համերգներ, իլլելով Պոլսոյ հայ համայնքի արդար գնահատանքը:

1977ին ան կ'ամուսնանայ Նատիա Հօրօզեանին հետ, Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, կնքահայրութեամբ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Ովսաննա Տաղտէվիրէնէլ ամուլի:

1977 Ապրիլին Պատրիարքարանի Կրօնական Ժողովը քննութեան կ'ենթարկէ Ստեփան Կէօզիւմեանը եւ յարմար կը նկատէ իրեն շնորհել սարկաւազութեան աստիճանը ձեռամբ՝ Գերշ. Տ. Շահան Ս. Արք. Սվաճեանի:

27 Մայիս 1977ին, Ստեփան եւ Նատիա Կէօզիւմեաններ, Հիւսիսային Ամերիկայի Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Վաչէ Ս. Արք. Յովսէփեանի հրաւերով, կը գաղթեն Ամերիկա եւ կը հաստատուին Լոս Անճելոս: Իսկ 1978ին Ստեփան Սրկ. իր երկու գաղափարակիր ընկերներով, 28 պոլսահայ դպիրներու մասնակցութեամբ եւ Վաչէ Սրբազան Հօր արտօնութեամբ կը կազմեն Խաչատուրեան Դպրաց Դաս Երգչախումբը:

Մեծահասակներու եւ մանուկներու Քայրոփրաքթիք բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետեանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



### ԲԱԶՄԱԽՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԳԱՍԸ ՏԱՐԵՎԵՐՁԻ ԵՒ ԱՄԱՆՈՐԻ

#### ԱՐԱՄ ՍԵՓԵԹՅԱՆ

-Ա-

Ինքնագնում: Հաշուեյարդար՝ ներանձնակա՛ն թէ՛ ընկերա՛յին պարտաւորութիւններու: Ինքնաճանաչողութիւն:

Նախ՝ իբրեւ Մարդ Անհատ: Ապա՝ Հայ Մարդը, իր ներկայ հայրենիքով եւ Սփիւռքով:

ԺԱՄԱՆԱԿԻ անհունութիւնը, անսկիզբ եւ անվախճան,- միջոցին մէջ արուեստականօրէն ստեղծուած տարիներու իր բաժանումներով, օրացուցային իր միակերպերով եւ կոտորակներով մեզի կը ներկայանայ իր հերթական ժամանումներով: Սա՛ արդիւնքն է մարդկային այն ուղի՛ղ տրամաբանութեան, որ հիմնուելով բնութեան անյեղի օրէնքներուն, բնական երեւոյթներու եւ եղանակային կանոնաւոր եւ հետեւողական ընթացքին, ժամանակին այս անհունութիւնը բերած է Չափի ու Սահմաններու յատակ համակարգի մը մէջ: Տարի՛ ու տարեվերջ: Ամանո՛ր ու կրկին տարուան մը տեւողութեան վրայ տարածուած մարդկային կեանք մը՝ իր ծնունդէն մինչեւ վախճանը: Աշխարհի մէջ բնութեան յարափոփոխ երեւոյթները խորհափող եւ արձանագրող մարդկային ուղեղը, չափի, կշիռի ու սահմանի եռեակ բանաձեւումներով, ժամանակի եւ միջոցի անսկիզբ եւ անվախճան:

Աւագի ժամացույցը, որ կը խորհրդանշէ ԺԱՆԱՆԱԿ-ը, ներկան սահմանելով անցեալի եւ ապագայի միջեւ անհունութեանը տուած է իմաստ եւ բովանդակութիւն ու զայն հիմնած ամէնօրեայ լոյսի ու խաւարի իրերայաջորդ երկարաժամեայ պահերու վրայ: Եւ այս՝ մեկնակէտ ունենալով ՕՐը եւ անոր նուազագոյն կոտորակներէն մինչեւ ՏԱՐԻն: Եւ այսպէս, պոկելով օրացուցի թերթիկները իր ամէնօրեայ հերթականութեամբ, ժամանակին մէջ սահմանուած ու սահմանափակուած ՏԱՐԻ ըմբռնումը կը հասցնենք իր աւարտին:

Յարափոփոխ երեւոյթներով յատկանշուած ժամանակը, տարիներու իր հերթականութեամբ, ՄԱՐԴը կը հրաւիրէ ինքնագիտակցութեան, ինքնասրբագրումի եւ իր պատասխանատուութիւններուն նկատմամբ առողջ կեցուածքի:

Դեկտեմբեր 31-ով իր լրումին հասա միամեայ ժամանակաշրջան մը մեր կեանքէն: Տարի՛ մը՝ իբրեւ Անհատ մը լոկ, մեր շրջապատէն ներս եւ տեղ մը՝ աշխարհի մէջ: Աշխարհ՝ մը՝ իր բազմամիլիոն մարդերու, բազմախորհուրդ հոգեվիճակով եւ ճակատագիրով, մտածումներով, տեսիլքներով ու ծրագիրներով, եւ այդ Անհատը՝ իր անմիջական շրջանակին հանդէպ ունեցած պարտաւորութիւններով եւ ներգործող դերակատարութեամբ:

Տարեվերջ էր կրկին եւ այս հանգրուանին բոլորս ալ, մենք մեզ կը հրաւիրենք պատասխանատուութեանը գէթ՝ մեր միամեայ գործունէութեան, համարատուութեանը մեր տնտեսական թէ՛ բարոյական յանձնառութիւններուն, անհատական թէ՛ ընկերային-համայնքային մեր ամէնօրեայ արարքներուն հաշուեկշիռը պատրաստելու: Որքան կարեւոր է տնտեսագիտականը,- որ թուանշաններու առաւել կամ նուազ արժեքափերով կը ներ-

կայանայ մեզի,- նոյնքան եւ կարեւոր կը նկատենք իմացական ու հոգեկանը՝ մեր ազգային-ընկերային կեանքին լուսարձակին տակ:

Արդարեւ, աշխարհիս քաղաքակիրթ ժողովուրդներու մեծագոյն տոկոսը կը տօնէ ԺԱՄԱՆԱԿԻ անհունութիւնը հանգրուանող, անոր թուականները օղակաւորող յատկանշական այս երեւոյթը իբրեւ նոր տարեթիւ:

Այո՛, երեւոյթ է լոկ, տարեթուային փոփոխութիւններով ձեւակերտուած այս ժամանակը: Էութիւնն անոր՝ այն Անհունն է, զոր կ'ապրինք իր «անցեալ-ներկայ-ապառնի» եռախորհուրդ պատկերին ընդմէջէն:

Որովհետեւ, դեռ երէկ, անցնող տարին մեզի համար «ներկայ» մըն էր, երբ մեր յոյսերն ու բաղձանքները կ'ուզէինք վերածել աննկուն հաւատքի, եւ այդ ոգիով կը հունաւորէինք գործընթացը ազգակերտումի:

Հայաստանի Հանրապետութեան գինանշանը

Այսօր, ամանորը թեւակոխած, պատմութեան գիրկը կը յանձնենք այդ փոքր ժամանակաշրջանը՝ տարին ամբողջ, եւ գոհունակութեամբ կը դիմաւորենք մեր ապառնի ժամանակաշրջանէն մեզի շնորհուող տարի մը եւս, իբրեւ երաշխիք մեր գոյատեւումին: Անցեալին վրայ, այլեւս ո՛չ մէկ հակակշիռ կրնանք բանեցնել: Սակայն, այդ «անցեալ»ը ունի իր պատգամն ու տրամադրուած տարեշրջանի մը ճանապարհը, լուսաւորե՛լ գործունէութեան մեր ուղին:

Այդ՝ պատեհութիւններու երկարաձգուող շղթան է, որ կը հրաւիրէ մեզ զգաստացումի, ինքնաքննարկումի եւ վերանորոգումի: Որքան մեր անձնական կեանքին, նոյնքան եւ՝ մեր ազգային-հասարակական գործունէութեան մէջ:

Ի գուր չէ որ ամէն տարեվերջին, կը դիմենք բանաստեղծ հոգիներէ սփռուած Լոյսի ճառագայթումներուն ու մեր ներաշխարհին հետ կը զրուցենք, հարց տալով «... Ի՞նչ մնաց, կեանքէն ինձի Ի՞նչ մնաց», ու կը պատասխանենք նոյնհետայն, թէ՛ «ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, ա՛յն միայն»: Արդարեւ, եթէ կեանքի բնականոն ընթացքը հիմնուած է նիւթական առք ու վաճառքի վրայ, բարոյական հասկացողութիւնը սակայն, միտքի ու բարիքի սերմնացաններուն համար կը պատգամէ աւելին, այսինքն՝ «ինչ որ գնաց ուրիշին՝ վերադարձաւ անուշցած ու զօրացած՝ հոգիիս մէջ մնալու յաւիտեան» (Վ. Թ. »):

Մեր հաւատքի առաջնահերթ բերդն է անկասկած, հայրենի պետական կառուցը:

Ուրեմն, եկէք ու չպայմանաւորենք, չսակարկենք մեր նուիրումը հանդէպ մեր հաւատքին միջնաբերդը եղող հայրենի պետականութեան:

Վարչակարգեր եւ պետական ղեկավար դէմքեր կոչուած են ծառայելու ժամանակի մը տեւողութեան ծիրէն ներս: Մնացունը՝ զոր պէտք է գիտնանք կանգուն պահել, հայրենի «ժողովուրդ եւ հող»ի գոյութիւնն է:

Այսօր, երբ ժողովրդավարական հիմունքներով առաջնորդուելու իրաւունքն ենք ձեռք բերած, գիտնանք խիղճի ու միտքի մեր ազատութիւնը ներդաշնակել հայ

ժողովուրդի գերագոյն շահերուն հետ:

Քաղաքական-ընկերային վարդապետութիւնները կը դառնան աւելորդ պերճանք, երբ մեր հայրենի ու ժողովուրդին գոյատեւումին վտանգ կը սպառնայ:

Արդ, որքանո՞վ արդեօք պիտի կարենանք զօրավիգ կանգնիլ հայրենի պետութեան, մեր հայկական անկախ պետականութեան ամրապնդումին եւ զօրացումին: Սփիւռքահայր առաւել քան երբեք՝ այսօր է որ պիտի գուրգուրայ, տէ՛ր կանգնի իր արեան գո՞ւլ իսկ անոր ամբողջականութեան եւ հզօրացումին: Խաղաղութիւն եւ անխռով կեանք, յատկապէս ներքին ճակատներու վրայ, երբ կրնան պատճառել մեր դարաւոր թշնամիին:

«Հայաստան» Համահայկական Հիմնադրամի 20-ամեակին առիթով հրատարակուած Հ. Հ. դրոշմաթուղթը

Իբրեւ ուսանող մեր ժամանակակից պատմութեան պիտի նկատենք թէ՛ մեր գաղափարի մարտիկներն ու ղեկավարները, ունեցեր են յստակ դիրքորոշում հանդէպ հայ ժողովուրդի խոնարհ դասակարգէն մինչեւ պետական աւագանին: Հեռո՛ւ վարչակարգերու սահմանափակ մտածողութենէն, անոնցմէ ժառանգած մեր վարած քաղաքականութիւնը եղած է ու կը մնայ եղբայրական զգացումներու ջերմութիւնը հանդէպ ղեկավարութեան բազմագոյն դիմագիծերուն, առանց սակարկելու թուականնե-

րու ոգին, անոնք կոչուին 1915 թէ՛ 1918, 1920, 1988 թէ՛ 1991:

Անհրաժեշտ է, որ բոլորիս համար Ա. Բ. եւ Գ. երեք հանրապետութիւններն ալ ըլլան սիրելի եւ հանդուրժելի իւրաքանչիւրին սխրանքներով ու նուաճումներով, եւ անոնց պարտադրուած բացթողումներով ու մոռալ ժամանակներով: Մեր սերունդն է, որ պիտի բանայ ՆՈՐ էՋ մը մեր պատմութեան մէջ:



Արդարեւ, ազգովին իրաւունք չունինք ընկրկելու, տկարանալու եւ դատարկ «անօթ»ներու վերածուելու: Խլուա՛ծ է մեզմէ նաեւ իրաւունքը յղիացեալ վիճակով հեռանալու վայելքի սեղաններէն... երբ հայրենի ժողովուրդին սահմանամերձ զանգուածներուն մէջ կան որոշ թիւով հայորդիներ մատնուած ահաւոր սովի ու քաղցի անխուսափելի վտանգին ենթարկուած ամենատարրական պահանջքէն... Երբ երկրաշարժի աղէտէն վերապրող ու բռնագաղթեալ բազմահազար հայորդիներ կը մնան տակաւին անպատասպար եւ աներդիք...: Ունի՞նք իրաւունքը անարձագանգ պահելու մեր հոգիներն ու տրամադիր վիճակը հանդէպ Հայրենիքի փրկութեան կոչին, երբ կարծիր եւ սպիտակ արիւնահոսութիւնն է որ կը շարունակուի հայրենի հողին վրայ ու մենք անցնող ամբողջ տարին, մեր ժամանակը վատնեցինք «բիւզանդական» սին

Շար.ք էջ 20

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

# ՅՈՒՇԱՐԶԱՆ

## ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ

Մրտաբույս նուէրով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝

**(626) 797-7680** կամ  
**(818) 429-2322** քիւերուն

Լաթակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնի կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:

Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաքաղը:

**ԿՈՉ ՍԱՅԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՍԱՆ-ՍԱՆՈՒԻՅԻՆԵՐՈՒՆ**

Բազմավաստակ տնօրէն Բենիամին Ժամկոչեանի սան-սանուիւիներէն անոնք որոնք Սահակեան Բարձրագոյն Վարժարանի կապակցութեամբ լուսանկարներ ունին իրենց մօտ, թող բարի ըլլան հեռաձայնել հետեւեալ քիւերուն:

**(818) 429-2322** Տիկ. Վարդուի Գագանճեան  
**(626) 422-9121** Տիկ. Արուսեակ Գրիգորեան



# ՉՄԵՌԱՅԻՆ ԱՐԵՒԱԴԱՐՁ ԵՒ ԼՈՅՍԻ ՈՒ ԱՐԵՒ ԱՍՏՈՅ ԾՆՈՒՆԴԸ Lnju, Lnju, Lnju... (Կեօթ)

## ՊՕՂՈՍ ԱՐՄԵՆԱԿ ԼԱԳԻՍԵԱՆ

Վիկինգների նաւերն էին խարսխել իրենց ծովերից դէպի արեւմտեան կողմն շատ հեռու աշխարհի մերձ ցամաքային ծովածոցի ափերին: Նրանք, քաջ մարտիկներ, խիզախ ծովագնացներ, բազում երկրներ նուաճած Սկանտինավեյ երկրի ժողովուրդ էին: Իրենց նաւերի առագաստները հովերին բացած, նաւարկել էին անյայտ ծովերով, խուսափանել զանգուռածալին սառցէ հսկաներից, ո՞ւր էին գնում, դէպի անյայտութիւն, թէ՛ ճախրում դէպի կապո՞յտ երկնքի... Եւ յանկարծ կանաչել էր հեռու հորիզոնը, ծովի ալիքներն էին ահարկու մռնչիւնով զարկում ցամաքի ժայռերին, ցաւից փոփոքում, սպիտակում, լեռնանում եւ բարձր կանչերով ետ զլորում: Յամաքի բնակիչներն էին բարձր կանչերով վազում ծովափ, աստուածները իրենց նման մարդիկ էին ափ հանել, խնդութիւն էր: Նաւաստիները իջել էին ափ, նայել բնիկներին, դէմքերը կարմիր էին, հագուստներն հազար գոյնի, գլխարկներին նախշուն փետուրներ: Բնիկների առաջնորդը ու նաւապետը ողջագործուել էին, հրաւիրել իրենց մօտակա կացարանները: Պատապարել էին եկուորներին, նուէրներ փոխանակել: Նաւերը լիքը նուէրներով վերադարձել էին երկիր: Վիկինգները իրենց ծովերից այն կողմը նոր աշխարհ էին գտել, նոր մարդիկ եւ սկսել յաճախ ճամբորդել դէպի նոր երկիր, ապրանքափոխանակութիւն կատարել նրանց մարդկանց հետ:

Աւարտին էր մօտենում ՝Ոսկէ աշուն՝-ը Վիկինգների երկրում:Արեւ աստուածն էր հիւանդացել, նրա լոյսն էր սկսել կարկամել:Իրենց լեռների լանջերը, դաշտերը քողուել կանաչ հէքիաթով: Նրանց տերեւների փոքրիկ գնդիկները արեւի լոյսն էին ըմպել, կեանքի հէքիաթ արարել, թթուածին պարզեւել մարդուն, կենդանական աշխարհին: Հիւանդ արեւ աստծոյ ակների մեղմած լոյսից մեռնում էին ծառերի տերեւների կանաչ գնդիկները, այնտեղ պոռթկում նարնջագոյն, դեղին, կարմիր հազար երանգների տիեզերական մասնիկները: Մարդ արարած, կեանքի վայելքը ըմբռնելու համար աշունը, վաղ ձմեռային արեւադարձին գնա՞ն անտառներ, կրակ են ծաղկել ծառերը, վառում են անտառները, հազար-հազար գոյնի հրդէհ է բռնկել, ինքն արեւ աստուածն էր իջել այնտեղ: Կլիմայական պայմանների բերումով աշնանը ծառերը նուազ կենսունակ են լինում, նրանց տերեւների կոթունների ուժը մարում է, ընկնում են ներքեւ, հազար-հազար գոյների գորգ հիւսում հողի երեսին:

Վիկինգները նորէն նաւարկում էին նոր երկրի ափեր: Ծովափ կառնած նաւերի ամբարների ապրանքներն էին ափ հանում: Ծտապում էին, ետ պիտի վերադառնալին արեւ աստծոյ ծննդեան տօնախմբութիւններին մասնակցելու: Բնիկներն էին ծովափին խումբ-խումբ հաւաքուած, փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող ապրանքների աշխոյժ փոխանակում կատարում:

Վիկինգների նաւաստիները

իրենց նաւերի առագաստներն էին հովին բացում, ընթացք վերցնում դէպի արեւելք: Իրենց արեւ աստուածն էր հիւանդացել: Ծովն էր մթնել, ջրերն էին մթնել, կարծես սեւ առագաստ էր փռուել ծովի երեսին: Ալեկոծ էր ծովը, ալիքներն էին բարձրանում, զարկում նաւերի կողերին, փշրում: Երկինք ելած լուսնեակը իր անուշ դէմքի տամուկ լոյսն էր փռում ալիքների գագաթներին, մի պահ սպիտակում էին ջրերը, ապա ծով իջնում նորէն սեւանում: Ծովերի, նրա ջրերի գաւակ վիկինգները իրենց նաւերը վարում էին մի պահ ամպերի տակից դուրս եկած լուսնեակի աշուկներից ծովի երեսին հոսած սպիտակ լոյսի ճանապարհով: Վիկինգները իրենց նաւաստիները յանդուգն նաւարկումով սանձում էին մոլեգնած ծովը: Դաժան կռիւ էր փոթորկալի ալիքների դէմ, նաւերը սահում էին նրանց յորձանուտներ, բարձրանում ալիքների բաշերին, նրանց վարում էին որպէս երկվարներ: Ծովերի տիրակալ վիկինգները յաղթական կանչերով նաւերը կառնում էին իրենց Սկանտինավեյ երկրի ծովախորշերի բնակավայրերի ափեր:

Ձմեռային գիշերահաւասար էր՝ Դեկտեմբեր ամսուայ 21, իրենց արեւ աստուածը հիւանդ էր, թիկնել էր երկիր մոլորակի բարձունքին, աշուկները փակել, քուն մտել: Համաժողովրդային վիշտ էր Սկանտինավեյ երկրներում: Մթնել էր Սկանտինավեյ, մարդիկ վշտահար էին: Բնակավայրերում խարոյկներ էին վառում, որ լոյս ու ջերմութիւն լինէր, որ ջերմանար հիւանդ արեւ աստուածը, որ նորէն իրենց աշխարհին լոյս սփռէր, իր արարումով՝ դաշտերը, լեռների լանջերը նորէն ծաղկէին, ժպտային իրենց, ինքն էլ նորէն քայլէր երկնքի կապոյտին, ջերմ-լոյս հոսէր իրենց երկրի վրայ: Մախրի շեղջեր վառած գնում արեւ աստծոյ մեհեաններ, աղաչանք խնդրում շուտափոյթ ապաքինում, որ աշուկները բացած ոտքի ելնէր, երկնքի կապոյտը ճեղքելով քայլէր, իր հրավառ ակներից լոյս հոսէր իրենց երկրներին: Մեհեանների առաջ նրա փառաբանման երգեր, փողերի հնչիւններ, թմբուկների բամբակ էին զարկում: Դեկտեմբերի 21 -ից երեք երկար օրեր յետոյ էլ դեռ մութ էր, արեւ աստուածը մութ ամպերի վերմակի տակ դեռ քնում էր: Իրենց աստծոյն նուիրուած մեհեանների բացատներում վառած խարոյկների ջերմի՞ց, թմբուկների զարկերի՞ց, համաժողովրդային աղաչանքից, թէ՞, տիրակալ արարչական ուժից յառնած-լոյսի ստուերներն էին սկսել ցոլալ իրենց երկրի երեսին: Եւ, Դեկտեմբերի 25 -ին տիեզերական արարչութիւնը արեւ աստուածին նորէն յայտնութիւն պիտի շնորհէր, ետ հէր երկնի մութ վարագոյրը, սկսէր նորէն ձեմել կապոյտ երկնակամարի երեսին, ժպտար երկրին ու նրանց մարդկանց: Սկանտինավեյն ոտքի էր, մարդիկ խումբ-խումբ գնում էին մեհեաններ, երկրպագելու արեւ աստուածին նրա ծնունդն էր:

Արեւ աստծոյ մեհեան: Վիկինգների երկրի հազար-հազար մարդիկ խանդաղատանքով մտնում

այնտեղ, ծննդեան նուէրներ, տներում աճեցրած ծաղիկների փունջեր մատուցում նրան խորհրդանշող արձանին, բարի մաղթանքներ յղում, որ շուտ մեծանար, որ իրենց երկրին երկար օրերի լոյս լինէր, նրա ակներից հոսած կրակի շեղջերը ջերմացնէին երկիրը:Արեւ աստուածն էր ամպերի տակից հազար-հազար լուսեղէն թիթեռներ հոսում մեհեանի բացատներում՝ իր ծնունդի տօնախմբութեանը եկած վիկինգների վրայ: Իրենց լայն բացած ափերին ընկած թիթեռները տանում պարմանութիւնների երեսներին հպում՝ որպէս իրենց արեւ աստծոյ ծնունդի ողջոյնի համբոյր:

Միհր արեւ աստուածը տակաւին անգոր էր ջերմացնելու երկիրը: Ձմեռ էր, խստաշունչ ցուրտ: Վիշապաճայն բուք՝-ն էր ոռնում, ձիւնն էր զարկում դռներին, պատուհաններին, ապակիներին նախշուն զարդեր քանդակում:Մրսում էր հողը, երեսին սառոյց էր կապել: Իրենց երկրների բազում լճակների երեսներն էին ցրտից սպիտակել: Արտերի երեսներին ձիւնէ վարագոյր էր իջել, կանաչ-կանաչ ցորեանը քուն էր մտել:

Արմէն-Հայ՝ Սարեաննենց Մարտիրոսը, ՝Ոսկէ Աշուն՝-ը ու վաղ ձմեռային արեւադարձներին գնացել է իրենց Ձանգեղուր աշխարհ, կանգնել անտառների դիմաց, ապահար դիտել այնտեղ վառուող հազար-հազար գոյների հրդէհը: Գնացել մօտիկ, ծառերից բուռ-բուռ քաղել այնտեղ յառնած կրակի բոցերը, այն լցրել հոգու տաճարները: Իր արուեստանոցի սպիտակ պաստառի վրայ լցրել հայրենի երկրի անտառների հազար-հազար գոյների հրդէհը, աշխարհին պարզեւել իր ցեղի սրտից հոսած բնութեան հրաշածին առեղծուածը:

Արմէն-Հայ, փախել ես քու արարչական աշխարհից, փախել ես քու աշխարհի կրակէ ծաղկունք հազած լեռներից: Արի գնանք Ձանգեղուրի լեռներ, որտեղ հանգրուանել էր նաեւ Մուսաների պաշտամունքով սրբազնացած Կարմիր լեռան լանջերի շէնի Հայկական Լէգէոնի Կապոյտալ՝ Լազիսեան Արմենակի բազմանդամ ընտանիքը: Մտնենք, բարձր լեռների գագաթներից հոսած հրաշէկ լաւալով ծածկած անտառներ, ինչպէ՞ս են նրանք կրակ ժպիտով ծիծաղում աշխարհին: Երբ գեփիւռ բարձրանում է լեռան լանջերն ի վեր, անտառի կրակի ծովն է ալիքում, չէ՞իր խնթախայն նրա սքանչանքից: Եկուր մեր հողիների տաճարների ջահեղը վառենք մայր բնութեան այդ կրակով: Ես վայելել եմ Միհր աստծոյ լոյսով արեւած Ձանգեղուրի անտառների կրակէ ծաղկունքի հէքիաթը, կրակէ փունջեր քաղել, սեղմել սրտիս, որ նրա արբեցումով իմ ցեղի հեթանոս աստուածների, իմ անուշ նախնիների, նրանց քաջ գործերի գովքի տաղեր երկնեմ՝ այն նշխարի նման բաշխեմ արմէններին, խաղաղ հոգիով քայլեմ իմ յաւիտենական ճամբաներով:

Իսրայելցիների երկրում մանուկ էր ծնուել, իրենց երկրի իմաստունների մարգարէացած փրկիչն էր նա, Յիսուս էին անուանել՝ Փրկիչ: Իսրայելի իմաստուն մոգերի յօրինած ՝Bible <Biblia <Book < Աստուածաշունչ՝-ում, որը պարփակում է Հին եւ Նոր Կտակարանները, յիշատակում էր իրենց արարչական երկրում, որի ծովի ջրերին ընկած լոյսի ծիածանում վահագնի ծնունդի երկունք եղել: Հարաւի ժողովուրդներ իրենց սալիկներին

նէութեան հաւատամքի սկզբունքները քննարկելու ու հաստատելու համար Բուժանիայի Նիկիա քաղաքում հրաւիրել է Քրիստոնեայ եկեղեցիների անդրանիկ Տիեզերական ժողովը, որին մասնակցել են ականաւոր աստուածաբաններ, եկեղեցու անուանի հոգեւոր գործիչներ եւ 318 եպիսկոպոսներ: Կայսրն է նրանց փոխադրական եւ կեցութեան ծախսերը հոգացել: Ժողովին մասնակցել են նաեւ Գրիգոր Լուսաւորիչի հօրաքրոջ տղայ՝ Սուրբ Յակոբը եւ Արիստակէս որդին: Ժողովին հաստատուել են Յիսուսի ծննդեան թուականը՝ Յունուարի 6, Յարութիւնը՝ գարնան գիշերահաւասարի Մարտի 21 -ից յետոյ առաջին լիալուսնի յաջորդ կիրակին, Քրիստոնեաների հաւատոյ Հանգանակը՝ ՝Հաւատամք Ի Մի Աստծոյ՝, Մարիամի ինքնութիւնը եւ այլ Քրիստոնէական սկզբունքներ: Ժողովը մերժել է Արիոսի քարոզը, որ Յիսուս Քրիստոս չունի Աստուածային էութիւն: Ընդունուած որոշումները բոլոր եկեղեցիների համար պարտադիր էին լինելու:

Ձմեռային արեւադարձ, Դեկտեմբերի 25, լոյս էր ծնուել իրենց աշխարհում, իրենց արեւ աստծոյ ծնունդն էր, արեւի ու լոյսի յաղթանակը մահուան նկատմամբ: Աւելի ուշ այդ տօնախմբութիւնը միացուել է Հռովմէացիների արեւ աստուած՝ Բաքոսի (Դիոնիսիոս) հետ: Քրիստոնէութեան ընդունումից յետոյ էլ, ձմեռային արեւադարձի այդ նոյն օրը գնում էին արեւ աստծոյ մեհեանում նրա ծնունդը տօնախմբելու: Մեհեանի շուրջը համաժողովրդային տօնախմբութիւն էր, աշխարհային գուարձանք, լոյսի փառաբանում, կեանքի բեռի ազատագրում: Աստուածների խմիչք՝ գինիով, լոյսով արբեցած բանաստեղծներն էին դէպի արեւ աստուած ճախրում, բանաստեղծութիւն երկնում, որ մարդկանց հոգիները յորդէին արեւի լոյսի հէքիաթով:

Դեկտեմբեր 25, արեւ աստուած լոյսի հրաշափառ ծնունդ: Երեք օրերի խաւար, լոյսի ծնունդը ամբողջ մութ տիեզերքն արժէր: Լոյսի ծնունդը տիեզերական գերագոյն իմաստութիւն էր, այն աստուած էին համարել: Հռովմում մտածել էին, թէ ինչո՞ւ ձմեռային արեւադարձի լոյսի ծնունդը միայն արեւ աստծոյ ծնունդն է եւ ինչո՞ւ Աստուածային էութեամբ Յիսուսի ծնունդը նաեւ ձմեռային արեւադարձի լոյսի աստծոյ ծնունդի այդ նոյն օրը պատահած չլինէր: Աշխարհին յայտնեցին, որ Յիսուսի ծնունդի օրն է: Հռովմի Յուլիոս Առաջին Պապը յայտարարել էր, որ Յիսուսի ծնունդը, Յունուարի 6 -ի փոխարէն պիտի տօնախմբուի Դեկտեմբերի 25 -ին: Այն առաջին անգամ տօնախմբուել էր 336 թուականին:

Հայկական Սրբազան Լեռնաշխարհ, Աստուածային արարչական երկիր, ձմեռային արեւադարձին լոյսի պոռթկում էր այնտեղ: Միհր արեւ աստուածն է ծնուել աստղամերձ Արարատ լեռան գագաթին, ակներից պայթած լոյս սփռում աշխարհին, վիկինգների հեռու երկրին, որտեղ լոյսի ծնունդ տօնախմբեցին: Հայոց աշխարհում պայթած հրաբուխները գիշերներին լոյս էին վառում իրենց արարչական երկրում, որի ծովի ջրերին ընկած լոյսի ծիածանում վահագնի ծնունդի երկունք եղել: Հարաւի ժողովուրդներ իրենց սալիկներին



### ԳՐՈՂՆԵՐՈՒ, ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ, ՊԱՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԱՐՈՒԷՍՏԱԳԵՏՆԵՐՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԷՆ ՍԵԿՈ

Վերջին քանի մը տասնամեակներու ընթացքին, սովորական կը դառնան հոգեկան անհանգստութիւններու եւ ստեղծագործութեան միջեւ կապը բացայայտելու գիտնականներու եւ հոգեբաններու ջանքերը: Գիտնականներ կը յաջողին ուղղակի յարաբերակցութիւն մը գտնել արուեստի ծիրէն ներս ստեղծագործութեան եւ հոգեկան վատառողջութեան միջեւ: Ուսումնասիրութիւններու այս արդիւնքները շատ հետաքրքրական են, յատկապէս երբ անոնք բացայայտեն որոշ արուեստի տեսակներու եւ յատուկ անհանգստութիւններու միջեւ կապը:

Սթոքհոլմի մէջ գիտնականներու կողմէ վերջերս կատարուած ընդարձակ ուսումնասիրութիւն մը ցոյց կու տայ, թէ schizophrenia-ի եւ ընկճուածութեան (depression) ախ-

տանշանները յաճախ ի յայտ կու գան ստեղծագործ անձերուն մօտ: Մէկ միլիոն անձերու մասնակցութեամբ այս ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, թէ գրողներու մօտ բարձր է schizophrenia-ի եւ ընկճուածութեան, ինչպէս նաեւ թմրեցուցիչներու եւ ալքոլի չարաչար հոմի վտանգը: Այս ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց կու տայ, թէ գրողներու մօտ կրնայ կրկնապատկուիլ անձնասպանութիւն գործելու հաւանականութիւնը: Իսկ լուսանկարիչներու եւ պարողներու մօտ կը բարձրանայ երկբեւեռ անհանգստութեան տառապելու հաւանականութիւնը (bipolar disorder): Ըստ այս ուսումնասիրութեան, այսպիսի մասնագէտներ մեծ հաւանականութիւն ունին բարեկամանալու հոգեկան անհանգստութիւններէ տառապող անձերու հետ:

### ԱՌԱՋԻՆ ՊԱՆԻՐԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ Է 7 ՀԱՁԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Ամերիկացի եւ եւրոպացի գիտնականները Լեհաստանի մէջ գտած են կաւէ իրեր, որոնց վրայ յայտնաբերուած են կաթնաչիւն ճարպերու մնացորդներ, որոնք կը վկայեն, որ հնագոյն մարդիկ տիրապետած են պանիրի պատրաստման արհեստագիտութեան:

Աշխարհի մէջ յայտնի հնագէտ ֆիթըր Պոկուցքի անցեալ դարու 80-ական թուականներուն յայտարարած է, որ եւրոպացիները սկսած են պանիրի արտադրութիւնը մեր թուարկութենէն 5500 տարիներ առաջ: Իր տեսակէտին համար գիտնականը հիմք ընդունած էր 6800-7200 տարուայ վաղեմութիւն ունեցող սերամիքական իրերու բեկորները: Անոնք ունեցած են 2-3 միլիմետր հաստութեամբ անցքեր, որոնք, ըստ ամենայնի, օգտագործուած են կաթը գտելու եւ պանիր ստանալու համար:

Սակայն աւելի լուրջ ապացոյցներու բացակայութեան պատճառով այս վարկածը մնացած է որպէս վարկած:

Վերջերս, «Nature» ամսագրին մէջ լույս տեսած է նոր գեկոյց մը, ուր մասնագէտները կ'ապացուցեն, որ նէոլիթի դարաշրջանին մարդիկ շատ աւելի հին ժամանակներէն տիրապետած են պանիրի պատրաստման արհեստագիտութիւններուն:


«Մեր հետազոտութիւնը հերքեց նախապէս ընդունուած տեսակէտը, թէ մարդիկ պանիրի արտադրութիւնը սկսած են 5 հազար տարի առաջ: Այժմ այդ թիւը աւելցած է 2 հազար տարիով», նշած է հնագէտներէն Ռիչըրտ Էլըրը:

Միւս կողմէ, կ'արժէ նշել, որ բրիտանացի գիտնականները ուսումնասիրութիւններու արդիւնքով պարզած են, որ հանրայայտ

Ձեր Ծանուցումները  
Վստահեցէ՛ք  
«Մասիս»  
Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680  
F: (626) 797-6863  
Massis2@earthlink.net

### ԱՆԱՀԻՏ ՉԱՍՏՈՒԱԾՈՒԻՅԻՆ ԳԼՈՒԽԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԲԱՆԱԴՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ԳՈՅԱՑԱԾ Է

Բրիտանական թանգարանին հետ բանաւոր համաձայնութիւն կայ Անահիտ շաստուածուհի արձանին գլուխը Հայաստան բերելու եւ ժամանակաւոր ցուցադրութիւն կազմակերպելու վերաբերեալ: Բանակցութիւնները ընթացքի մէջ են: Փաստաթուղթերը պատրաստ են, որոշ հարցեր շտկելէ ետք՝ յառաջիկային անոնք պիտի ներկայացուին Բրիտանական թանգարանին:



Հայաստանի երիտասարդական հիմնադրամի հասարակայնութեան հետ կապերու եւ լրատուութեան բաժնի աշխատակից Լիլիթ Գրիգորեանի տեղեկութիւններով, 7 Մարտին Հայաստանի մօտ Մեծն Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իրլանտայի Միացեալ Թագաւորութեան դեսպանատան մօտ Հայաստանի երիտասարդական հիմնադրամը կազմակերպած էր Անահիտ շաստուածուհի արձանին բեկորները Լոնտոնի Բրիտանական թանգարանէն Հայաստան տեղափոխելուն նուիրուած շարժում:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը, կրթութեան եւ Գիտութեան նախարար Արմէն Աշոտ-

եանի հետ Մեծն Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իրլանտայի դեսպաններուն փոխանցած են Անահիտ դիցուհիին արձանը հայրենիք վերադարձնելու ուղերձը եւ հիմնադրամի նախաձեռնութեան միացած երիտասարդներուն ստորագրութիւնները:

Հայաստանի երիտասարդական հիմնադրամը 20-27 Փետրուարին կազմակերպած էր ստորագրահաւաք մը: Մայրաքաղաքէն եւ հանրապետութեան տասը մարզերէն շուրջ 20 հազար երիտասարդներ միացած են Մեծն Բրիտանիոյ եւ Հիւսիսային Իրլանտայի դեսպաններուն յղուած ուղերձին:

### ԿԱՆԱՉ ԹԵՅԻ ԵՐԿՐՊԱԳՈՒՆԵՐԸ ԲԱՆՏԱԴՈՐ ԵՆ

Որքան բախտաւոր են անգլիացիները, որոնք օրուան ընթացքին յատուկ ժամանակ կը տրամադրեն թէ՛ խմելու համար: Անգլիական մշակոյթին մէջ «teatime»ը թանկագին եւ անփոխարինելի է: Անգլիացիներու պարագային, թէ՛ չը նաեւ կը ստեղծէ ջերմ մթնոլորտ ընտանիքի անդամներու եւ ընկերներու միջեւ, որոնք իրար մօտ կու գան «teatime»ի ժամանակ: Ներկայիս գոյութիւն ունին թէ՛ չի բազմաթիւ տեսակներ, որոնք բոլորն ալ օգտակար են: Թէ՛ չը ունի բազմաթիւ դարմանիչ յատկութիւններ, այս գծով European Journal of Clinical Nutrition ամսաթերթին մէջ հրատարակուած է յօդուած մը, որուն համաձայն, կանաչ թէ՛ չը կրնայ զգալիօրէն բարելաւել տղամարդոց յիշողութիւնը եւ ընկալումը: Ըստ հետազոտութեան հեղինակներուն, օրական երկու գաւաթ կանաչ թէ՛ չի սպառումը բաւարար է, որ տղամարդիկ ցուցաբերեն այս յատկութիւնները:



Երկու գաւաթ կանաչ թէ՛ չը խմեն, որմէ ետք կ'ենթարկուին յիշողութիւն պահանջող աշխատանքներու, որոնց շնորհիւ ի յայտ կու գայ, թէ կանաչ թէ՛ չը սպառող տղամարդոց մօտ աւելի բարձր է յիշողութեան, ուշադրութեան, կեդրոնացումի եւ խնդիրներու լուծման կարողութեան մակարդակը: Այս մէկը չի նշանակեր, թէ անոնց լաւ յիշողութեան եւ մտային կարողութիւններու մակարդակի միակ պատճառը կանաչ թէ՛ չըն է, սակայն ան մեծ դեր ունի այս հարցին մէջ: Լաւ կ'ըլլայ, որ կիներ իրենց ամուսիններուն յաճախ թէ՛ չը հրամցեն:

Փորձարկումի ընթացքին, մասնակիցները քանի մը ամիս օրական

<p>ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԱԾ</p>	<p>ST. GREGORY ARMENIAN CHURCH <b>Geragos</b> BANQUET HALL OF PASADENA</p>	<p><b>NEWLY REMODELED</b></p>
<p><b>Now ready to host your</b></p> <ul style="list-style-type: none"> <li>• Wedding</li> <li>• Baptism</li> <li>• Anniversaries</li> <li>• All other happy &amp; sad events.</li> <li>• հարսանիք</li> <li>• Սկստութիւն</li> <li>• Տարեդարձ</li> <li>• և ամէն ուրախ ու տխուր առիթներ:</li> </ul>		
<p><b>ՎԱՏԷ 562-715-8730 ՎԱՏԷ</b></p> <p><b>Լաւագոյն և յարմարագոյն գիներով ձեզ կ'ապաստարկենք</b></p>		



### ԱՆՍԱԶԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Շաբաթը ավարտվում է 14-էն

Քրիստոսը թէկուզ շատ կարճ պահու մը համար, սակայն՝ շատ արժէքաւոր ու պիտանի դրսեւորումով:

Արտակը 35 տարեկան ուժեղ եւ ժպտուն երիտասարդ մըն է, որ արդէն տասը տարիէ ի վեր հաստատուած է Սթրազպուրկ: Ծնողքն ու եղբայրը Հայաստան կը գտնուին, իսկ ինք առանձինը կ'ապրի այս քաղաքին մէջ: Փորձած է համալսարանական ուսում մը ձեռք բերել՝ հաշուաւոր-չհաշուաւոր կեցութեան տասը տարիներուն ընթացքին, բայց ապարդիւն: Իսկ հիմա ան թարգմանական գործեր կը կատարէ: Տիրապետելով ֆրանսերէնին կը փորձէ հայերէնի թարգմանութիւններ ընելով օգտակար հանդիսանալ աւելի քան ութ հազար հայերու, որոնք եկած են Հայաստանէն եւ հաստատուած՝ Սթրազպուրկ: Տակաւին տարի մը առաջ Արտակ կրցած է ձեռք ձգել կեցութեան յատուկ արտօնագիր՝ իր քաղաքացիական իրավիճակը աւելի ապահով դարձնելով:

Տիրանն ու Նազիրը հալէպահայեր են, որոնք աւելի քան քառասուն տարիներէ ի վեր հաստատուած են Սթրազպուրկ: Հաւանաբար միայն իրենք եւ մէկ-երկու այլ ընտանիքներ արտասահմանէն եկած են, մնացեալ բոլոր հայերը կու գան հայրենիքէն: Տիրանն ու Նազիրը լայն սիրտ եւ ընդունելութիւն կը ցուցաբերեն բոլոր հայերուն նկատմամբ, որոնք կարիք ունին օգնութեան: Իրենց տունը ձեռով մը բաց դուռ է, ուր հայեր կրնան մտնել, եթէ կ'ուզեն եւ կը փնտռեն քիչ մը «ապահովութիւն»: Բայց այս բոլորէն վեր անոնք կը յայտնեն նաեւ իրենց ցաւն ու մտահոգութիւնը, թէ հայրենիքը կը պարպուի իր հարազատ գաւազներէն:

Բայց շարունակեցի լսել արեւելահայերէն հոս թէ հոն, այլգասեան այս գեղեցիկ քաղաքին մէջ մէկ շաբթուան կեցութեան ըն-

թացքին: Կարծես յագեցած ըլլալի հանդիպումներէն ու անոր միջոցով հաստատուած հաղորդակցութիւններէն ու հաղորդականութիւններէն, չկրցա՛յ, թէ չուզեցի (ես ալ չեմ գիտեր) ժամանակ տալ կենալու եւ ըսելու հայերէն խօսողներուն, թէ՛ «Բարե՛ւ, ես ալ հայ եմ»: Կասկածէ վեր էր, թէ ուրախ էի, որ կը լսէի հայերէն, բայց հայր Նահպետեանին զարմանք-հարցումէն մեկնելով՝ կար նոյն հետեւողականութեամբ ուրիշ հարցում մը, որ կը չարչրկէր միտքս ու հոգիս՝ «Ձեմ գիտեր՝ ինչո՞ւ կ'ընեն»: Ինչո՞ւ պէտք է ձգել սեփական տուն, հող, հայրենիք, հարազատ, հայօրէն ու հայկականօրէն ապրելու առանձնաշնորհումներ եւ գալ հոս թէ հոն, նոյնիսկ երբ այդ բոլոր վայրերը շատ գեղեցիկ են, սակայն հեռու են արմատէն, ինքնութենէն, հայկականութենէն: Բայց չէ՞ որ տարիներ շարունակ երազեցինք եւ փափաքեցանք հայրենիք ունենալ, այս տեսլականով ապրեցանք երկար տարիներ: Բայց ինչպէ՞ս բացատրել այն սուղ փորձառութիւնը, զոր ապրեցանք իբրեւ ժողովուրդ կորսնցնելով թիւ ու հող, թէ՛ կալուած եւ թէ՛ մտաւորական-մշակութային արժէքներ. աւելի՛ն, «ծննդեան թուական»-ը նոյնիսկ:

Եթէ տնտեսական ու ապրուստ ճարելու մղձաւանջն է հայրենիքէն արտահոսքի մղողը, բայց արդեօք ո՞ւր է այն ապահով վայրը, յատկապէս՝ վերջին տարիներուն, ուր մարդ չի տազնապիր իր տնտեսական վիճակներուն բարւօք լուծում մը գտնելու:

Եթէ մեր հայրենի ներկայ իրավիճակին ու անոր տուն տուող արտագաղթին պատճառներն ու անոնց բարւօք լուծումներուն գործընթացը դիւրին չեն, եւ եթէ պատասխանները քիչ մը կ'ուշանան, բայց կը մնայ հարցումը, որուն ետին կայ ցաւն ու յուզումը. «Ձեմ գիտեր՝ ինչո՞ւ (ինչպէ՞ս) կ'ընեն»

### ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ Դ.Դ. ԵՐԳՉԱԽՈՒՄԸ

Շաբաթը ավարտվում է 8-էն

Կէօզիւմեանի եւ Երգեհոնարութեամբ Բրշ. Ռուբէն Սրկ. Սողոմոնեանի: Օրուան պատարագին էր՝ Գերշ. Տ. Ներսէս Ս. Արք. Պողոսապետ: Այս ուխտագնացութիւնը առաջինը պիտի ըլլար իբրեւ սփիւռքէն ժամանած երգչախումբ մը:

Իսկ աւելի քան 27 տարիներ Ս. Սարգիս եկեղեցին ծառայելէ յետոյ, 2007 թուականին, երգչախումբը Արեւմտեան Թեմի նորընտիր բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Ս. Արք. Տէրտէրեանի առաջարկ ու փափաքով կը հաստատուի Լոս Անճելոսի Burbank քաղաքի նորակառոյց Առաջնորդարան եւ կը դառնայ «Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի Առաջնորդանիստ Սրբոց Դեռնդեանց Մայր Տաճարի Խաչատուրեան Դպրոց Դաս Երգչախումբ»:

Խաչատուրեան Դ. Դ. Երգչախումբը, իր հիմնադրութեան 30 ամեակի առիթով, 2008 Ապրիլ ամսուան մէջ կը կազմակերպէ ուխտագնացութիւն մը եւս այս անգամ դէպի Երուսաղէմ: Ուխտագնացութեան մասնակցեցան գրեթէ 24 անդամներ, ոմանք իրենց տիկիններով, ոմանք առանձին եւ մի քանի համակիրներ ընդամէնը 50 հոգիներ:

### ԱՍԵՓԱՆ ՍՐԿ. ԿԵՕԶԻՄԵԱՆ

Շաբաթը ավարտվում է 8-էն

բանաստեղծութիւնը: Ձեռնարկը տեղի ունեցաւ Wilshire Ebell համերգասրահին մէջ:

Սոյն համերգին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ յայտնի դաշնակահար Շահան Արծրունի, պարիթոն՝ Յակոբ Թօփուզեան, ատենախօս՝ Նուրհան Ուզունեան եւ Լեւոն Չալէն Սիւրմէլեան, իսկ ասմունքով Տիկ. Ալին Տօնիկեան:

1998ին Խաչատուրեան Դ.Դ. Երգչախումբը իր հիմնադրութեան 20 ամեակին առթիւ կ'իրականացնէ ուխտագնացութիւն դէպի Հայաստան եւ երգչախումբը 23 Օգոստոս 1998ին 32 անդամներով կ'երգէ Ս. Պատարագը Սուրբ Էջմիածնեայ Մայր Տաճարին մէջ, ուր նոյն օրը, Ս. Պատարագէ յետոյ, վեհարանին մէջ Գարեգին Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Գարեգին Սարգիսեան, երկար տարիներու եկեղեցւոյ ծառայութեանց առ ի գնահատանք, Ստեփանին կը շնորհէ Սուրբ Ներսէս Շնորհալի Շքանշանն ու Սրբատառ Կոնդակը:

Չանազան թուականներուն Թրքահայոց Հայրենախնամ Պատրիարք Հայրերուն, ինչպէս՝ Շնորհք Գալուստեան, Գարեգին Գազանճեան եւ Մեսրոպ Սուլթանեան, նոյնպէս Ամենայն Հայոց Կաթողիկոսներուն՝ ինչպէս վազգէն Ա. Գարեգին Ա. եւ Գարեգին Բ. վեհափառ Հայրերուն Լոս Անճելոս Հովուապետական այցելութիւններուն առթիւ մօտաւորապէս երբեմն 100, երբեմն 200 անդամ-անդամուհիներէ բաղկացած երկուսն միացեալ երգչախումբին կողմէ երգուած Կոմիտասեան եւ Եկմալեան բազմաձայն սուրբ Պատարագներու երգեցողութեանց ղեկավարութեան պաշ-

Երգչախումբը նախ այցելեց Պոլիս եւ երգեց պատարագը Պոլսոյ Ազգային Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի յարակից Սուրբ Մատրան մէջ առաջնորդութեամբ Ստեփան Սարկաւազի: Պոլսոյ մի քանի օրուան կեցութենէ յետոյ խումբը մեկնեցաւ Թել Աւիլ օդակայան եւ մասնաւոր հանրաշարժով, մի քանի օրուան մէջ, զանազան տեսարժան վայրեր այցելելէ յետոյ անցաւ Երուսաղէմ: Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի մէջ երգչախումբը իր մասնակցութիւնը կը բերէ Աւագ Հինգաբլի օրուան ոտնլուսայի եւ խաւարման արարողութեանց եւ կ'երգէ Զատիկուայ ճրագալոյցի Ս. Պատարագը, Կոմիտասեան բազմաձայն եղանակով, գլխաւորութեամբ Ստեփան Սրկ. Կէօզիւմեանի: Արարողութեանց կը նախագահէ Երուսաղէմի Պատրիարք Ամենապատիւ՝ Տ. Թորգոմ Ս. Արք. Մանուկեան:

Երգչախումբը 35 տարիներու ընթացքին կ'իրականացնէ անհամար Սուրբ Պատարագի հոգեպարար երգեցողութիւններ եւ աշխարհիկ համերգներ Լոս Անճելոսէն մինչեւ Սան Տիեօ, Սան Ֆրանսիսքօ եւ Արիզոնա, իւրաքանչիւր անգամ բերելով նաեւ իր բարոյական ու նիւթական աջակցութիւնը ի պայծառութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու:

սուրբ, օրուան առաջնորդներու կողմէ կը վստահուի Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեանին, որ բարձր կը գնահատուի վեհափառ Հայրապետներու եւ Սուրբ Պատարագներուն մասնակցող աւելի քան տասը հազար հաւատացեալ ժողովուրդին կողմէ:

Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեան իր ամբողջ կեանքի տեւողութեան, սիրած է եկեղեցին, սիրած է Յիսուս Քրիստոսը եւ իր անխոնջ ու անձնուէր ծառայութիւնը բերած է ի պայծառութիւն Հայաստանեանց Առաքելական Եկեղեցւոյ: 50 տարիներու դպրոցութեան նուիրական ծառայութեանց քով ան պաշտօններ ստանձնած է Խաչատուրեան Դ. Դ. Երգչախումբի Տնօրէն Խորհուրդէն ներս, ինչպէս նաեւ Լոս Անճելոսի Պոլսահայ Միութեան կեդրոնական Սանուց Յանձնախումբի եւ Պատուոյ Ատենի մէջ: Ներկայիս Արեւմտեան Թեմի Միացեալ Երգչախումբերու Խորհուրդին Գ. ատենապետի եւ Միացեալ Երգչախումբի խմբավարի պաշտօնով, բազմաձայն շարականի երգեցողութեամբ, մասնակցած է Ecumenical կրօնական արարողութիւններուն:

Յոբելեար Բրշ. Ստեփան Սրկ. Կէօզիւմեան ներկայիս կը ծրագրէ Կոմիտասեան բազմաձայն Սուրբ Պատարագի երգեցողութիւնները ձայնագրել խոսասարկի վրայ, երաժշտական նուագակցութեամբ, որուն համար արդէն տարիէ մը ի վեր Պոլսահայ յայտնի երաժշտագէտ՝ Պրն. Մաթիկ Թօլիեանի հետ աշխատանք կը տանի: Եթէ Աստուած կամենայ 2013ին, Խաչատուրեան Դ. Դ. Երգչախումբի հիմնադրութեան 35 ամեակի առթիւ սոյն խոսասարկները հրապարակ պիտի հանուին:

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեներակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

**Մանրամասների համար հեռաձայնել՝**  
**(818) 246-0125**

**«ՔԱՋ ՆԱՋԱՐ» ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամէն Կիրակի  
Երեկոյեան ժամը 10:00–ից 12:30  
Կլէնտելի 380-րդ կայանից

**massispost.com**  
daily news updates



**ՑԱԲԱԿՑԱԿԱՆ**

ԼԵՆԱ ԿԷՕՔՃԵԱՆ-ՓՈՇՈՂԼԵԱՆԻ մասնական տխուր առիթով մեր խոր ցաւակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի համայն պարագաներուն եւ հարազատներուն, մասնաւորաբար ամուսնոյն՝ Աւետիս Փոշողլեանին եւ զաւակներուն՝ Կորիւնին եւ Չարենցին:

**ՑԱԲԱԿՑԱԿԱՆ**

ԱՆՈՒՇ ՀԱՆՆԷՍԵԱՆԻ մասնական առիթով (մահացած Պէյրութ) «Մասիս»ի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն պարագաներուն, մասնաւորաբար իր եղբայրներուն՝ Կարապետ եւ Յովհաննէս Հաննէսեաններուն:

**ՑԱԲԱԿՑԱԿԱՆ**

ՄԻՀՐԱՆ ՍԱԹԱՄԵԱՆԻ վաղահաս մահուան առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի քոյրերուն, եղբայրներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն:

**ՑԱԲԱԿՑԱԿԱՆ**

ՆԱԶԱՐԷԹ ԳՕՓՈՒՇԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս»ի խմբագրութիւնը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Մարի Բննիկեան-Գօփուշեանին, դստեր Լիզա Գօփուշեանին եւ ընտանեկան համայն պարագաներուն:

**VA Print Media**

Book Printing • Hard Covers • Year Books  
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ  
Հին Գիրքերու Նորոգութեան Համար  
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱՁԱՊԱՀԵԱՆԻՆ



**Vahe Atchabahian**

1870 E. Layton St. • Pasadena, CA 91104  
626-354-5924 • vamedia@yahoo.com

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----

Tel :----- Fax : -----

**HayastanInfo.net**

**ՉՄԵՌԱՅԻՆ ԱՐԵՒԱԴԱՐՁ ԵՒ  
ԼՈՅՍԻ ՈՒ ԱՐԵՒ ԱՍՏՕՈՅ ԾՆՈՒՆԴԸ**

Շարունակուած էջ 16-էն

գրեցին, որ լոյսի երկիր՝ արարչական Դրախտ է այն: Կանաչ, կապոյտ լոյսի երկիր, սիրոյ, խաղութեան աշխարհ:

Մուսաների պաշտամունքի լեռների լանջերի ձմեռային արեւադարձ, շէնքերի մարդիկ խարոյկներ, ջահեր վառում՝ դիմաւորելու հէքիաթային գարնան գալուստը: Հայկական Մովսէսեանի մեղմիկ, անուշ, լոյսոտ գեփիւն էր լեռան լանջերի անտառների կանաչ երեսին համբոյր շաղում, նրա գգուանքից ծառերն էին թափահարում իրենց վարսերը: Լոյսոտ էին ձմեռային արեւադարձի օրերը: Երկնակամարում ամպերը գրկած անցնում էր արեւ աստուածը, նրա լոյսի ջերմից ամպերն էին հալում, մեղմիկ իջնում լանջերին, ցորեանի կանաչը ցօղում: Ցորեանն էր արեւի լոյսի փայլով ժպտում: Մուսաների Լեռան պաշտամունքի Արմէն-Հայ, եթէ լոյսի ճառագայթներին յենած բարձրանայիր արեւը գրկելու, նայէիր ինչպէ՞ս էր քու լեռների կանաչ լանջերին լոյսի հէքիաթ վառում, շէնքերի տանիքները կարմիր լոյսով հրաբխանում:

Ձմեռային արեւադարձի առաւօտ, հայոց խորով կոտակ թագաւորի անտառի բարձունքի լեռան գագաթին լոյսի բաշերն է փռել հայոց նախնիների արեւ աստուած Միհրը, լոյս էր ցանում հայոց աշխարհին, որ արարչութիւն լինէր այնտեղ: Ձորի պոռնկին յառնած սիւնազարդ տաճարի բացատում հարիւր-հարիւր արիացի Արմէն-հայեր ափերով լոյս քաղում Միհրի ակներից, երեսները ցօղում: Գառնի աւանի Միհրի տիեզերական տաճարում, արեւածին Արմէն-հայերի նախնիների լոյսի արեւ աստուած Միհրի ծնունդի

տօնախմբութիւն էր: Քու սրբական լեռնաշխարհից, քու հին հաւատքից խորթացած Արմէն-Հայ, զաւակներդ գրկած արի գնանք Գառնի տաճար, քու ցեղի մարդկանց հետ տօնախմբենք լոյսի արեւ աստուած Միհրի ծնունդը: Տաճարի աստիճաններից իջնում է Միհրը, արեւաթագից ճառագած լոյսը ողողում է բացատը, լոյսի տօն է, խնդութիւն է, արիացիների հրճուանք է: Լոյսի ջահեր վեր պարգած մոգպետը, բուրվառներ հնչեցնող մոգերն են, շարք-շարք արեւալոյս հանդերձներով քրմուհիներն են իրենց հեթանոս նախնիների տաղերն հնչում: Ունկն դիր, նրանց հնչիւնները հայոց աստուածների Աշտիշատի մեհեանների գովերգերն են: Արմէն-հայերը գնում են դէպի Միհրը, երկրպագում, նրա արեւահուր թագից լոյս քաղում: Արմէն-Հայ դու էլ լոյս քաղիր, այն լցրու քու եւ զաւակներիդ սրտերին, որ օտար աշխարհում չմրսէք: Շարք-շարք ծիսում էր բացատը, հայոց նախնիների շուրջ պարերն էին, Միհրն էր լոյսի կրակ հոտում նրանց վրայ: Աշխարհային տօնախմբութիւն էր, խնդութիւն արմէն-հայերի հոգիներին: Արմէն-Հայ բարձրացիր տաճար, գրկիր սիւնները, ատրուշանի կրակի լոյսից ցօղիր քու ու զաւակներիդ դէմքերը, խնդիր Միհր աստուծուն՝ հայոց հին աստուածների լոյսով մկրտել նրանց, ամէն:

Ինչպէս քրմացած վարուժան բանաստեղծը պիտի երգէր, դու էլ Արմէն-Հայ՝  
Քնարդ ա՛ն,  
Յանո՞ւն Ուժին, յանո՞ւն Գեղին,  
մտիր մեհեանն աստուածներուն,  
բահը ձեռքիդ՝ բազնէ բազին համասփոէ  
Շուր ու արիւն:

**OFFICES FOR RENT IN PASADENA**  
**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Ave  
Pasadena, CA 91104  
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով  
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝  
(626) 398-0506

**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
SERVING BATON ROUGE SINCE 1979

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**  
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝  
հաճեցէք կապ պահել մեզի հետ:  
G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104



### ԲԱԶՄԱՆՈՐՀՈՒՐԴ ՊԱՏԳԱՍԸ ՏԱՐԵՎԵՐՁԻ ԵՒ ԱՄԱՆՈՐԻ

Շարունակուած էջ 15-էն

վէճերով եւ իշխանատենչիկ զգա-  
յախաբուծիւններով, երբ անդին,  
հայրենի բնաշխարհին մէջ, Արցա-  
խի մէջ հայը տակաւին իր անհա-  
ւասար գոյամարտը կը մղէ յանուն  
իրաւական անկախութեան: Պէտք է  
քաջ գիտնանք, որ առանց մեր  
յաղթական աւարտին, վտանգուած  
է գոյութիւնը ե՛ւ Արցախին, ե՛ւ  
Զանգեզուրին եւ թէ՛ ներկայ ան-  
կախ պետականութեան:

Ու որպէսզի կարենանք յաղ-  
թականօրէն դուրս գալ այս նոր  
Մարդարապատէն, անհրաժեշտ է  
գերլարուած մեր բոլոր կարելիու-  
թիւններուն: Եւ այս՝ կը յաջողինք  
կանգուն պահելով հայուն բարձր  
բերդերն հաւատքին: Մինչեւ այ-  
սօր, մեզի համար մեր բերդերը կը  
թուէին ըլլալ անառիկ: Գիտնանք  
պահել զանոնք իրենց պատմական  
բարձրութեան վրայ:

Ժամանակն է որ մէկդի հրենք  
արուեստական պատուարներ: Քան-  
դէնք օտարին կողմէ թելադրուած  
անհաշտ եւ աններդաշնակ գաղա-  
փարախօսութիւններ, բռնաբաւոր-  
ուինք՝ հայրենի պետականութեան  
շուրջ, անոր քաղաքա-տնտեսական  
ու գիտութեան վարկը ե՛ւ նիւթա-  
պէս, ե՛ւ բարոյապէս բարձր պահելու  
նախանձախնդրութեամբ:

- «ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՄԱՀԱՅՎԱ-  
ԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ին լիակատար  
յաջողութիւնը՝ ա՛յդ կը պատգամէ:  
Նո՛յն քաղաքատարրերու գործե-  
լակերով որդեգրել նաեւ ՄԻԱՅՅԱԼ  
ՀԱՅՈՒԹԻՒՆ բանաձեւը մեր գաղա-  
փարախօսութեան մէջ:

- «ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾԱՐՔ»-նե-  
րու ծրագրաւորեալ աշխատանքին  
յաջող ընթացքը՝ ա՛յդ կը թելադրէ:

- Հայրենի մշակոյթին, գրա-  
կանութեան, գեղարուեստին ու գի-  
տութեան նոր խոյանքներ ու նուա-  
ճումներ ներշնչելու եւ հնարաւորու-  
թիւններ ստեղծելու հրամայական  
պահանջքը, պարտադիր օրէ՛նքն է  
համահայկական մերօրեայ վերած-  
նունդին: Առանց մշակոյթի, մեր  
գոյատեւումն իսկ հարցական կը  
դառնայ: «Ոգու Սով»ը ընդմիշտ  
հեռացնել:

Արդ, իրբեւ պիւրութեամբ, երբ  
«Հաշուէյարդար»-ի տրամադրու-  
թիւններով ակնարկ մը կը նետենք  
անցեալ տարուան ընթացքին հայ  
ժողովուրդին ու մեր հայրենիքին  
ճակատագրական այս փոքր ժամա-  
նակահատուածին վրայ, պիտի նկա-  
տենք երկու հիմնական ազդակներ.-

ա) Մեր հակակշիռէն դուրս  
երեւոյթներու հարկադրանքը, եւ

բ) Յանուն ժողովրդավարու-  
թեան, մեր ազգային-հասարակա-  
կան մտածողութեան մէջ երեւան  
եկող տարբերութիւններու վրայ  
հիմնուած արուեստական տաղանա-  
յներ, որոնց առկայութիւնը առաւել  
եւս կը բարդացնէ անկախ պետու-  
թեան վարիչներուն քաղաքական  
դժուարին ճանապարհը:

կ'ընդգրկենք նաեւ մեր միութենա-  
կան եւ ազգային յարակից հար-  
ցեր... չէ՞ք խորհիր թէ, ամէն Ամա-  
նորին հոգեփոխութեան, վերանո-  
րոգումի ու վերածաղկումի շունչն  
է որ կը մտնէ մեր էութենէն ներս  
ու մեր բաղձանքը կ'ըլլայ որոնել  
ու գտնել մեր ներաշխարհին մէջ  
Նոր Մարդուն գոյաուճը: Նոր  
Հա՛յը՝ առաւել բեղուն եւ օգտա-  
ւէտ, գիտակցութեամբ մեր ազգա-  
յին-քաղաքացիական պարտաւորու-  
թիւններուն, ա՛ռաւել եւս մարդա-  
ցած եւ հայացած մեր գործունէու-  
թեան դաշտին մէջ:

Հետեւաբար, Ամանորի սեմին,  
անհրաժեշտ է որ մեզի համար  
հաստատել գիտնանք բարոյական  
սկզբունքներ ու չափանիշներ՝ խու-  
սափելով մեր անձնական թէ՛ ազգա-  
յին յոռի դիրքաւորումներէն: Մա-  
նաւանդ մեր կազմակերպչական  
կեանքին մէջ:

Կ'ընդգծենք «Բարոյական  
սկզբունքներ» վարքագիծը, հրա-  
ժարելու գնով հատուածամու ու  
եսակեղրոն շահախնդիր վերաբե-  
րումներէ: Թող չճգնին մարդիկ,  
փաստարկելու համար, թէ քաղաքա-  
կանութիւնն ու քաղաքագէտներ կը  
մերժեն սկզբունքներուն բարոյա-  
կան էՈՒԹԻՒՆը: Չեն մերժեր:  
Տեսանելի՛ն այլոց կողմէ՛ երեւոյթն  
է լուր, եթէ ա՛յդ է որ իրենց  
ենթադրել կու տայ նման մտածու-  
մներ:

-Գ-

\*ԵՎԵՂԵՅԻՆ ՀԱՅՎԱԿԱՆ,- մէկ  
հօտ ու մէկ հովիւ իր հոգեւոր  
առումով, իր առաքելական շունչով  
եւ էութեամբ, լուսաւորչահաստատ  
Մայր Աթոռ Ս. Էջմիածնայ քաղաք-  
ապարտեան հեղինակութեան հանդէպ  
զգաստ եւ յարգալիր ըմբռնումով:  
Վարչական բաժանումներն ու նուի-  
րապետական այլ Աթոռներու ներ-  
կայութիւնը հա՛րկ է որ կոչուին  
գորացնելու Հայց. Եկեղեցւոյ Միջ-  
նաբե՛րդը եւ անխառն միասնակա-  
նութեամբ շղթայէ գաջն, որպէսզի  
Պետութիւն եւ Եկեղեցի ներդաշն  
զուգահեռականով դառնան լծակից  
իրարու: Հայուն հոգեւոր դաստիա-  
րակութիւնը չենթարկենք օտարա-  
մուտ ազդեցութիւններու, այլ՝ գիտ-  
նանք գաջն վերածել առօրեայ կեան-  
քի բարոյագիտական վսեմ գաղա-  
փարականովն հայակերտ կիրար-  
կումին: Այն ատեն է որ քրիստոնէ-  
ական վարդապետութեան Ս. Մննդեան  
խորհուրդը կը դառնայ Աստուածա-  
թախանաբան իրա՛ւ լուսարձակի մը,  
որուն իմացական լոյսը իւրաքան-  
չիւր ամանորին պիտի վերանորոգէ  
մեզ ու պիտի պարգեւէ հոգեկան  
առողջ վիճակ մը: Անցեալ դարուն  
պատահած են տասնամեակներ, երբ  
խորհրդային վարչակարգի Հայց.  
Եկեղեցին ու Մայր Աթոռը ապրե-  
ցան պատմական տաղանապալի ժա-  
մանակաշրջաններ, եւ հայրենի պե-  
տականութիւնը գտնուեցաւ տխուր  
հարկադրանքին ներքեւ քաղաքա-

կան վերվայրումներու: Անպատ-  
ու տկար պայմաններու տակ գտնուող  
Մայր Աթոռին՝ այդ պարագանե-  
րուն անհրաժեշտ էր գորավիզ ու  
նեցուկ կանգնել եւ ոչ թէ առիթ  
ընծայել որ ներքին թէ՛ արտաքին  
ճակատներու վրայ դժուարութիւն-  
ներ յարուցուին: Ա՛յս պէտք է ըլլայ  
մօտեցումը թէ՛ մեր նուիրապետա-  
կան միւս Աթոռներուն եւ թէ՛ հայ  
ժողովուրդի մէջ գոյութիւն ունեցող  
մեր այլ յարանուանութիւններուն:

Փոխադարձ յարգանք եւ իրա-  
ւախոհութիւն:

Այս է հրամայական պահանջքը,  
եթէ կ'ուզենք պատմութեան դատաս-  
տանին ներկայանալ հայօրէն:

Այլապէս, որո՞ւ համար կը  
դողանջեն Ս. Մննդեան եւ Աստուա-  
ծայայտութեան զանգերը... եւ որո՞ւ  
համար կ'երգուին՝

«... եւ չըկիր խաղաղութիւն  
եւ ի մարդիկ հաճութիւն» եւ ինչո՞ւ  
համար կ'երգանակաւորենք մեր բաղ-  
ձանքը,

«Միշտ անշարժ պահեա՛, զԱ-  
թոռ Հայկազնեաց»:

Այն՝ որ հայ պետականութեան  
բացակայութեան ամբողջ ընթաց-  
քին, Հայ Եկեղեցին խորհրդանշեց հայ  
ազգին զօրքն ու զօրագլուխը եւ  
հասցուց մեր ՆԱԻՐ դէպի նաւահան-  
գիստը խաղաղութեան:

Ազգակերտումի խորհուրդը  
կ'ապրինք այսօր եւ մեր շուրջը  
Ամանոր է, սիրելի ընթերցող:

Հայկական Ս. Մննդեան քաղ-  
մախորհուրդ ներգոյութիւնն ալ կը  
զուգահիւսի ամանորեան տօնական  
այս օրերուն:

... Պիտի գիտնա՞նք արդեօք  
արձագանգել Ազգակերտումի Անլ-  
ուելի Զանգակատան դողանջներուն:  
Զէ՞ որ ՀԱԻԱՏԱՄՔ անուն  
անխորտակ սար մը ունինք, որ կը  
գտնուի մեր հոգիներուն մէջ ու մեր  
պարտէն է նոր սերունդներուն փո-  
խանցել այդ գիտակցութիւնն ու  
հաւատքը առանց տատանումի եւ  
երկբայումի, առանց նախապաշա-  
րուծի եւ հատուածական սահմանա-  
փակ մտածողութիւններու:

Ամանորի այս հանգրուանին,  
մեր մտածումներուն մէջ մնալուն  
տեղ կը գրաւէ Հայց. Առաք. Եկեղեց-  
ւոյ անասանութիւնն ու միասնա-  
կանութիւնը: Առաւել քան երբեք,  
այսօր է որ պիտի փարինք հոգեւին  
մեր սրբազան ժառանգութիւննե-  
րուն, պիտի ջանանք հեռո՛ւ վանել  
օտարամուտ աղանդաւորական շար-  
ժումները եւ մեր նուիրապետական  
Աթոռներու ներդաշնակ գոյակցու-  
թեամբ բարձր պիտի պահենք Հայց.  
Եկեղեցւոյ դարաւոր հեղինակութիւնը,  
գլխաւորութեամբ Մայր Աթոռ Ս.  
Էջմիածինի եւ ամբողջական մասնակ-  
ցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ  
կաթողիկոսութեան ու մեր Պատրի-  
արքական Աթոռներու Երուսաղէմի եւ  
Կ. Պոլսոյ:

Այս ոգին երբ ըլլայ տիրական  
մեր բոլորիս մէջ, այն ատեն է որ  
օտար պետութիւններու հեղինակա-  
ւոր ներկայացուցիչները պիտի կա-  
րենանք համոզել, թէ՛ այս ընդար-  
ձակ աշխարհի մէջ մեր ժողովուր-  
դին ալ իրաւունքն է իր հոգին վրայ

ապրիլ ազատ եւ ինքնիշխան, ստեղ-  
ծագործե՛լ ձգտումովը բարիքն ու  
գեղեցիկին, եւ համամարդկային ըն-  
տանիքին մէջ մեր տեղն ու դերը  
յաւերժացնել գիտութեան եւ ար-  
ուեստի նուաճումով:

Հայաստանի եւ Արցախի պե-  
տական ներկայացուցիչները ա՛յս է  
որ կ'ուզեն համայն աշխարհէն:  
Սփիւռքահայութիւնը՝ միասիրտ եւ  
միախորհուրդ, այս հրամայականէն  
առաջնորդուած պիտի օժանդակէ  
մեր սրբազան դատին բարոք լու-  
ծումին: Որովհետեւ, մեր ժողովուր-  
դը քաջաբար եղեր է պաշտպանը  
խաղաղութեան եւ յաւերժ գարունի  
որպէսզի վերածաղկեցնէ իր հայրե-  
նիքը, տեսիլքովը համահայկական  
եւ համամարդկային մեծ իրագոր-  
ծումներու:

\*\*\*

Ամանորի սեմին կը գտնուինք,  
ու 1915-ի Յեղասպանութեան 100-  
ամեակը մեր դուռը կը թակէ:

\*Անհպելի՛ ու պարտադիր է՝  
Միացեալ ՀԱԻԱՏԱՄՔ-ով ներակա-  
յանալ Միջազգային Դատական Ատ-  
եանին, յանուն մեր Համազգային  
Պահանջատիրութեան:

\*Անհրաժեշտ է վերակազմա-  
կերպել Սփիւռքի թէ՛ Հայրենիքի  
մտաւորական ու քաղաքական յանձ-  
նառութեան տէր Մարդոյժը:

\*Արցախի իրողական Անկախ  
կարգավիճակը օժտել իրաւական  
հիմունքներով:

\*Վերջ տալ անհատական թէ՛  
հատուածական համակրանքներու եւ  
հակակրանքներու պատճառած երկ-  
փեղկումներուն ու բարձր պահել  
համահայկականութեան մեր արժա-  
նապատուութիւնը: Եւ այս՝ թէ՛ ի  
հոգեւորս, եւ թէ՛ աշխարհականօ-  
րէն:

Եթէ Մենատիրութեան մը անհ-  
րաժեշտ է, այդ մէկը թող որ ըլլայ  
բարոյագիտական ու համահայկա-  
կան մեր սկզբունքներով հիման  
վրայ: Հաւատքն ու Յոյսը կ'առաջ-  
նորդեն մեզ: Ամանորի սեմին, կը  
հաւատանք... թէ՛ յոյսի եւ լոյսի  
ճառագայթումներ՝ համայն աշխար-  
հի՛ մարդկութեանը կը բերեն նորա-  
նոր խոստումներ, կու տան աւետիսը  
կարելի իրագործումներու եւ այս  
ակնկալութիւններով ահաւասիկ,  
մենք կը թեւակոխենք նոր տարեշր-  
ջան մը եւս: Մարդկութիւնը յուզող  
առաջին հիմնահարցը՝ անհատա-  
բար թէ՛ հաւաքաբար, իր կեանքին  
բարօրութիւնն է. ընթերցի՛նք մը  
աշխարհի բարիքներուն, ծնունդը  
գեղեցիկ ու վսեմ մտածումներու եւ  
իտէպններու եւ իրականացումը իր  
անաւարտ իղձերուն:

Ահա թէ ինչո՞ւ՝ Տարեկերջն ու  
Ամանորը կը համարենք նախաշա-  
ւիղ՝ պատասխանատուութիւններու  
գիտակցութեան, եւ գերլարումին՝  
մեր հոգեկան կորովին ու կարելու-  
թիւններուն:

Այս մտածումով կը փակենք  
Ամանորեան մեր խոհերը, որպէսզի  
կարենանք պայծառ ու յստակ դարձ-  
նել կեանքի մէջ այն միակ ճշմար-  
տութիւնը, որ պիտի արձանագրու-  
ուի էջ առ էջ իբրեւ Պատմութիւն  
Հայցոյ:

Ս. Էջմիածնայ Մայր Տաճարը  
Ահա՛ թէ ինչո՞ւ, Ամանորի  
սեմին կանգնած, երբ մտովի կը  
վերջինք անցնող տարիներու իրե-  
րայաջորդ դէպքերը, երբ ինք-  
նագննումի եւ ինքնավերաբժեկո-  
րումի այս պահէն կը ստանանք  
մղիչ ոյժը ճշմարտութեան որոնու-  
մին ու յայտնաբերութիւնը գալի-  
քին, երբ մեր սեփական ԵՄ-ին դատ  
ու դատաստանին գուզընթաց մեր  
քննարկումին շրջագիծէն ներս